



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

355(062)

U-12

ՈՍՈԱՎԻԱԲԻՄԻ
ԱԳԻՏՊՐՈՊԱՇԽԱՏԱՆՔԸ
ՍՈՎԽՈԶՆԵՐՈՒՄ
ՅԵՎ
ԿՈՒՆԻՈԶՆԵՐՈՒՄ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — ՄՈՍԿՎԱ, 1931

2802-10

355(062)
U-19

Ա. ՍԱԴՈՎՍԿԻՅ

ՈՍՈԱՎԻԱԲԻՄԻ
ԱԳԻՏՊՐՈՊԱՇԽԱՏԱՆՔԸ
ՍՈՎԽՈՋՆԵՐՈՒՄ Լ ԿՈՒՆՈՋՆԵՐՈՒՄ

ԽԱՀԱ ԺՈՂՈՎՈՐԻՄՆ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԳՉՈՒԹՅՈՒՆ
ՍՈՍԿՎԱ 1931



25 JUL 2013

40.738

Թարգման. Բ. ՄԱՐ.



771-2010

Уполн. главлита № В 190 Заказ № 1026 Тираж 5.000
 Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,
 Шлюзовая набережная, 10.

ՇԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ոստավիաքիմի Համամիութենական 2-րդ համագումարն առաջինը լայնորեն դրեց Ընկերության ստորագրած ողակեն-րում ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք տանե-լու խնդիրները: Հիմնականում հենց այդ աշխատանքի բովան-դակությունն ու խնդիրներին է նվիրված ներկա աշխատու-թյունը: Միևնույն ժամանակ, չնայելով ագիտպրոպագա-տանքի կազմակերպությանը, ձևերի ու մեթոդների հարցերի նշանակությանը, հեղինակը գիտակցաբար խուսափել է հա-մապատասխան գլուխներն ու մասերն ավելի լրիվ կերպով զարգացնելուց, հաշվի առնելով այդ կողմից Ոստավիաքիմի կազմակերպությունների գործնական փորձի աղքատությունն ու պակասությունը: Այստեղ դեռ գյուղում ագիտպրոպա-գատանքի գործնական փորձը հաշվառելու և ուսումնասի-րելու վերաբերմամբ մեթոդական-հետախուզական մեծ աշխատանք պետք է տարվի՝ կոլխոզային շարժման նոր պայմաններում: Մանավանդ մեծ անհրաժեշտություն է ներ-կայացնում այս գրքույկի հետագա լրացումը ագիտացիայի այժմ կազմակերպվող սեկտորների ավելի արժեքավոր ու ցուցական նվաճումներով, վոր հեղինակը հույս ունի անելու՝ յերկրորդ հրատարակության ժամանակ: Մնդրում ենք Ընկե-րության այն բոլոր ագիտպրոպագործիչներին ու կազմա-կերպիչներին, վոր սովորաբար, կոլխոզներում ու մեքե-նա-տրակտորային կայաններում են լինում, մասնակցել գրքույկի բովանդակության կոլեկտիվ մշակմանն ու «Ոստա-վիաքիմ» հրատարակչության միջոցով հեղինակին հաղոր-դել իրենց տպավորությունները, անհաջողություններն ու նվաճումները, վոր ունեցել են աշխատանքի ընթացքում:

Նամակները պետք է ուղարկել հետևյալ հասցեով. —
 Москва, Хрустальный пер., 2, дом РВС, издательству
 «Осоавиахим».

ԱՌԱՋԱԲԱՆ

Ոստավիաքիմի Համամիութենական 2-րդ համագումարը Ընկերության առաջ ե դրել ոստավիաքիմիական աշխատանքը գյուղում, ամենից առաջ նրա համայնացրած սեկտորում (սովխոզներում, կոլխոզներում ու մեքենա-տրակտորային կայաններում) ծավալելու և ամրապնդելու խնդիրն՝ իր ամբողջ մեծությունը:

Համագումարն առանձնապես նշել է, վոր կոլխոզային շարժման ահագին հաջողությունները, սովխոզների ու մեքենա-տրակտորային կայանների արագ աճումն ու կուլակություն, վորպես դասակարգի, վոչնչացումը համատարած կոլեկտիվացման հիման վրա՝ գյուղական ռայոններում զգալի չափերով փոխում են Ոստավիաքիմի աշխատանքի պայմանները և լիովին իրական նախադրյալներ ու լայն հեռանկարներ են ստեղծում, վորպեսզի Ընկերությունը աշխատանք ծավալե գյուղում, մանավանդ սովխոզներում, կոլխոզներում ու մեքենա-տրակտորային կայաններում:

Մասնավորապես այժմ առաջին անգամն է մեծ հնարավորություն ստեղծվում սովխոզների ու կոլխոզների գծով գյուղերը մտցնելու Ընկերության աշխատանքի այնպիսի ճյուղեր ու ձևեր, վորոնք մինչև այժմ գրեթե բացառապես քաղաքի սեփականություն էին դարձած (ողային-քիմիական պաշտպանություն, ավիացիոն աշխատանք, պաշտպանություն տներ, վարժական-շարժային միավորներ և այլն): Վերոհիշյալ այն, ինչ վոր գյուղացիական մանր ցանուցիք անհատական տնտեսության պայմաններում վեր եր ուժերից՝ միանգամայն իրագործելի յե խոշոր սովխոզի կամ կոլխոզի

պայմաններում: Այդ պատճառով այժմ չափազանց կարևոր նշանակություն է ստանում բոլոր սովխոզներում, խոշոր կոլխոզներում ու մեքենա-տրակտորային կայաններում Ոստավիաքիմի ուժեղ և աշխատունակ բջիջներ ստեղծելը ու այդ բջիջները գյուղում Ընկերության ամբողջ աշխատանքի հենակետ դարձնելը:

Ընկերության Համամիութենական 2-րդ համագումարն այդ խնդրի վրա յե կենտրոնացրել Ընկերության բոլոր կազմակերպությունների ուղադրությունը:

Այդ խնդիրը լուծելու համար պահանջվում է ամենից առաջ Ոստավիաքիմի ագիտացիոն-պրոպագանդիստական լայն աշխատանք ծավալել սովխոզներում ու մեքենա-տրակտորային կայաններում:

Թե Ընկերության ամբողջ գործնեյություն մեջ՝ ագիտ-պրոպագանդիստանքն ինչ դեր ու նշանակություն ունի, բավականաչափ շեշտված է Ոստավիաքիմի Համամիութենական 2-րդ համագումարի վորոշումներում. այդ աշխատանքն Ոստավիաքիմը ոստավիաքիմիական աշխատանքի հիմնական առանցքային ճյուղերի թվում է դրել:

Այդ հանգամանքը պետք է առավել ևս նկատի ունենալ Ոստավիաքիմի գործնեյությունը սովխոզներում ու կոլխոզներում ծավալելիս, վորտեղ աշխատանքի անսահման ասպարեզ կա, բառիս իսկական իմաստով:

Դրա հետ միասին պետք է նշել, վոր սովխոզներում ու կոլխոզներում Ոստավիաքիմի ագիտպրոպագանդիստանք ծավալելու համար մենք մի շարք նպաստավոր գործոններ ունենք ու պիտի ունենանք:

Այդ գործոնների թվին են պատկանում. — գյուղի պայմաններում ավելի կարող կուսակցական ու կոմյերիտական (իսկ սովխոզներում ու մեքենա-տրակտորային կայաններում և՛ պրոֆմիութենական) կազմակերպություններն ու կադրերը («25 հազարականները», ղեկավար կադմը և մյուսները), վորոնց մեջ, անշուշտ, քիչ չեն լինի և պահեստի հրամկազմից, մենատնտեսավար գյուղացիների համեմատությամբ, սովխոզների ու կոլխոզների բանվորների կազմակերպված ու համախմբված լինելը, ագիտպրոպագանդիստանք

տանելու համար մեծ մասամբ ավելի ուժեղ բաղաներն ու միջոցները (ակումբները, կուլտուրայի տները, պաշտպանութեան տները, սովխոզների ու կոլխոզների տպագրական թերթերը, կինոն, ռադիոն և այլն) և մի շարք այլ պայմաններ:

Այդ նպատակով գործողներն Ոստավիաքիմի կազմակերպութունները սովխոզներում ու կոլխոզներում պետք է լիովին ոգտագործեն լայնորեն ծավալելու, կուսակցական կազմակերպութունների ղեկավարութեամբ, իրենց ազդեցությունը պետությանը, սերտորեն կապելով այն կոմսոմոլի ու պրոֆորգանների հետ (սովխոզներում):

Սովխոզների ու կոլխոզների բջիջներն, ագրոպրոպաշխատանք տանելիս, չպետք է փակվեն միայն իրենց սովխոզի կամ կոլխոզի շրջանակներով: Վճռաբան պետք է այդպիսի աշխատանքով ընդգրկեն նույնպես և հարևան, դեռևս կոլխոզ չմտած ռայոնների մենատնտեսավար գյուղացիներին:

Ընկ. Սադովսկու գրքույկի նպատակն է Ընկերության Համամիութենական 2-րդ համագումարի վորոշումների ուղիով նշել Ոստավիաքիմի ագրոպրոպաշխատանքի հիմնական խնդիրները, բովանդակութունը, ձևերն ու մեթոդները՝ սովխոզի ու կոլխոզի պայմաններում:

Գրքույկը գրված է սովխոզների, կոլխոզների ու մեքենատրակտորային կայանների Ոստավիաքիմ կազմակերպութունների և Ոստավիաքիմի ռայոնական խորհրդների ղեկավար ակտիվի ու ագրոպրոպագործիչների ոստավիաքիմիական կադրերի համար:

Այս գրքույկն առաջինն է, վոր փորձ է անում Ոստավիաքիմի սովխոզների ու կոլխոզների ագրոպրոպաշխատանքի հարցերի ամբողջ գումարն ընդգրկելու: Դրանում է նրա արժանիքը, մասնավորապես վոր մեղնում այդ աշխատանքի գործնական փորձը առայժմ դեռ մեծ է:

Գրքույկը Ոստավիաքիմի ղեկավար ակտիվին ու ագրոպրոպաշխատանքներին անկասկած կոզնի Ընկերության ագրոպրոպաշխատանքը սովխոզներում ու կոլխոզներում ծավալելու գործում:

2. Խ

I. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՅԵ

ԻՆՉՊԵՍ ԱՊԱՀՈՎԵԼ ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ

I

«Պատերազմը — պատահականություն չէ, «մեղք» չէ, ինչպես քրիստոնեական տերություններն են մտածում (վորոնք ոպորաունիստներից վատ չեն քարոզում ազգասիրություն, մարդասիրություն ու խղաղություն), այլ կապիտալիզմի մի անխուսափելի աստիճանը, կապիտալիստական կյանքի նույնքան որինական ձևը, վորքան և խղաղությունը» (Լենին):

Կապիտալիստական աշխարհը նորից դուրսվում է այն աստիճանի վրա, վորից դուրս իմպերիալիստական նոր պատերազմը անխուսափելի չէ դառնում: Այդ աստիճանը՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամն է: Կապիտալիստական պետություններն, արդյոք, կանցնեն հաջորդ, անխուսափելի աստիճանին, իմպերիալիստական պատերազմի աստիճանին — թե՛ կանգ կառնեն մահացու հիվանդությունը «խաղաղ» միջոցներով բժշկելու վրա, դրանում է համաշխարհային քաղաքականության հիմնական հարցն այսօր:

Լենինը խորապես ճիշտ եր գտնում այն դրութունը, թե պատերազմը քաղաքականության շարունակութունն է, միայն ուրիշ, բունի միջոցներով: Քաղաքականությունն իր հերթին վոչ այլ ինչ է, յիթե վոչ կենտրոնացրած եկոնոմիկա: Իսկ կապիտալիստական պետությունների եկոնոմիկան ներկայումս լիքն է լուրջ հետևանքներով հղի՝ մեծագույն հակաօթյուններով:

Չինաստանում 60 միլիոն մարդ սովամահ լինելու սպառնալիքի տակ են գտնվում: Իսկ Ամերիկայում ցորենն ու յեզիպտացորենն իբրև վառելիք են գործածում: Յեզիպտայի ու Ամերիկայի արդյունաբերողները չգիտեն, թե ինչ անեն իրենց հսկայական քանակությամբ ապրանքները: Գնները շարունակ ընկնում են: Բայց տասնյակ միլիոնավոր բանվորներ սովի ու աղքատության են մատնված: Հիմնական հակասությունն է՝ մի կողմից ժամանակակից կապիտալիզմի արտադրական ահագին հնարավորությունները, մյուս կողմից՝ բնակչության լայն մասսաների թույլ գնորդական ընդունակությունը: Գերարտադրության ու ապրանքները սպառելու շուկաների քչության հետևանքով՝ անշնչանում են Ամերիկայի, Գերմանիայի, Անգլիայի, Լեհաստանի և մյուս կապիտալիստական յերկրները՝ ճգնաժամի անդամալուծություններ բռնված ձեռնարկությունները: Ամերիկայում կապիտալիստական «ոսցիոնալիզացիան» ճգնաժամի դեմ պայքարելու այնպիսի միջոցներ չեն հասել, ինչպիսին ֆերմերների մեջ ագիտացիա մղելն է, վոր ցանքսերը 30⁰/₁₀-ով կըրճատեն: Այստեղ ամբողջ հույսն անբերրիության վրա չէ դրված: Այստեղից, հենց այդ հակասություններից, կապիտալիզմի համար կատարյալ որինաչափությամբ բղխում են նոր շուկաների, աշխարհի նոր բաժանման համար տարվող պայքարի քաղաքականությունը, ապա ուրեմն և նոր սպառողներ ու իմպերիալիստական պատերազմների քաղաքականությունը:

Տնտեսական հակասությունների սաստկանալու հետ միաժամանակ՝ սոցիալական հուզմունքների փոթորիկն է աճում կապիտալիստական յերկրների ու գաղութների աշխատավոր մասսաներում: Հնդկաստանը, Չինաստանը, Հնդկական կովի կրակով: Յեզիպտայի ու Ամերիկայի քաղաքների փողոցներում ավելի ու ավելի հաճախ են հեղափոխական կոիքներ բռնկվում, վորտեղ գլխավոր մասնակցողներն են լինում գործադուրկների մասսաները: Գործադուրկների թիվը անցել է 30, իսկ ընտանիքների հետ՝ 90 միլիոնից և դեռ շարունակում է աճել: Ճգնաժամի հարվածների տակ ցնդում

է յեզիպտական ոսորդությունից ու սսիական «գանդիզմի» խաղաղ յերազանքների թույնը: Պրոլետարական մասսաներում աճում է հեղափոխական վերելքը: Կապիտալի դեմ տարվող հեղափոխական կոիքների դեկավարությունն ամենուրեք կոմունիստական կուսակցությունների ձեռքն է անցնում: Այստեղից՝ կապիտալիստական աշխարհի համար պրոլետարական հեղափոխության մահացու վտանգն է ծագում, յեթե ճգնաժամը շարունակի խորանալ ու սաստկանալ:

Պատերազմ, թե՞ հեղափոխություն:

Պատերազմն ընդունակ է փոխելու կապիտալիստական յերկրների ամբողջ եկոնոմիկան: Նա միանգամից կարող է հսկայական պահանջներ կայացնել մարդկանց, մետաղի, հանդերձանքի, ուտելու մթերքների և այլն, և այլն, մինչև իսկ փթած պահածոների: Հենց վոր «թնդանոթային մսի» առաջին ելեկոնները դեպի ռազմաճակատ ուղարկվեցին՝ պատերազմը ֆարրիկներին ու գործարաններին կստիպե նորից ծխալկատաղի թափով կպտտեն արկեր արտադրելու հարմարեցված ստանոկներն ու մեքենաները: Վերջապես, նա կարող է վերացնել և ներքին դասակարգային հակասությունները՝ սոցիալ-ֆաշիստների ու սոցիալ-պատրիոտների ոգնություններ: Գոնեն այդպես է յեղել 1914—1918 թվերին: Այն ժամանակ մարդկային միլիոնավոր կյանքեր ու աշխատանքով ստեղծված միլիարդավոր արժեքներ վոչնչացնելով՝ կապիտալն արտադրական ուժերի ու կուտակումների նոր վերելքի յելք գտավ ի հաշիվ պրոլետարիատի ու գաղութների աշխատավոր մասսաների:

Դրված հարցի պատասխանը պարզ է. — կապիտալիստական արտադրության ներկա ճգնաժամի զարգացման վորոշ աստիճանի վրա կապիտալիստական պետությունների քաղաքականությունն անխուսափելի ու միանգամայն որինաչափ քաղաքականությունը կլինի ի մպերիալիստական պատերազմը:

«Նորհրդային հանրապետության և իմպերիալիստական պետությունների կողք-կողքի գոյությունը յերկար ժամանակ անհնարին ևս վերջի վերջո կհաղթե կամ մեկը, կամ մյուսը: Իսկ մինչև այդ՝ անխուսափելի յեն մի շարք ամենասոսկալի բաղիտներ խորհրդային հանրապետության ու բուրժուական պետությունների միջև» (Լենին):

Յեթե բանը միայն իմպերիալիստների ու սոցիալ-իմպերիալիստների «բարի» ցանկություններից լիներ կախված, պատերազմի տարերքը վաղուց արդեն կապիտալիստական աշխարհի կողմից կանչված կլիներ ձգնաժամի փոթորկի դեմ: Աշխատավոր մարդկություն բախտից՝ «կազմակերպված կապիտալիզմ» առայժմ գոյություն ունի միայն սոցիալ-լա-կեյների ու աջ ոպորտունիստների յերեակայություն մեջ, իսկ կապիտալիզմի համաշխարհային տնտեսական ձգնաժամը, համաշխարհային պրոլետարիատի աճող հեղափոխական վերելքն ու սոցիալիզմի շինարարություն արագացող տեմպը ԽՍՀՄ-յան մեջ — փաստեր են, վորոնցից փախչել չի կարելի: Հենց այդ փաստերն ել գուցե ավելի մեծ հափերով են կանխորոշում ժամանակակից իմպերիալիստական պատերազմի բնույթը, քան կապիտալիստական պետությունների միջև յեղած արտաքին հակասությունները:

Յեթե անցյալում կապիտալիզմը շարունակ կրկնել և իրեն հատուկ հակասությունների վերարտադրության միևնույն շրջանը, — վերելք - ծաղկում - ձգնաժամ - պատերազմ - քայքայում, ապա իմպերիալիզմի նորագույն պատմությունն ավելի մեծ անխուսափելիություններ այդ շրջանը լրացնում և նոր տարրով — հեղափոխությունով: Պրոլետարական նոր հեղափոխությունները հնարավոր են և առանց նոր պատերազմների, բայց նոր պատերազմները հնարավոր չեն առանց նոր հեղափոխությունների, մասնավաճ՝ նոր պատերազմներ Նորհրդային Միության դեմ: Կոմիստերնը միշտ այդպես և բնորոշել ապագա պատերազմների բնույթը և այդ բնորոշումը խորապես ճիշտ և: Այսօրվա իմպերիալիստական պատերազմը

հենց սկզբից իսկ միևնույն ժամանակ և քաղաքացիական պատերազմ և, վորովհետև առանց ճակատամարտի դասակարգերի միջև, առանց պրոլետարիատի հեղափոխական շարժումը ճնշելու՝ անհնարին և դառնում ժողովրդների սպանդանոց կազմակերպելը: Այդ դրությունը հափադանց պարզ ու գեղեցիկ կերպով մոտերս բնորոշեց կոմունիստական պատգամավոր Նեյբաուերը, յերբ գերմանական պարլամենտում ռազմա-ծովային նավատորմի բյուջեն 1930 թվի մայիսի 23-ին քննելիս ասաց՝ —

«Մենք հայտարարում ենք ձեզ, վոր վոչ վոքի չի հաջողվի վոչ մի, նույնիսկ ամենադաժան հալածանքներով ստիպել պրոլետարիատին հրաժարվելու իմպերիալիստական, միլիտարիստական քաղաքականությունից: Շարունակեցեք պատերազմի պատրաստություն ձեր խեղադրությունը: Մենք ձեզ նույնն ենք հայտարարում, ինչ վոր Կարլ Մարքսն և հայտարարել միլիտարիստներին: «Հիմարներով լցված նավը գուցե կարող և բավական ժամանակ քաժու դեմ լողալ, սակայն նա իր ճակատագրին հենց նրա համար և բնականաջ գնում, վոր հիմարները դրան չեն հավատում: Այդ ճակատագրին՝ առաջիկա պրոլետարական հեղափոխությունն և»:

Յերկու աշխարհների — կապիտալիզմի աշխարհի ու կառուցվող սոցիալիզմի աշխարհի պայքարը, — անհաշտ, անդդոք, կատաբրեալես վոչնչացնելու համար տարվող պայքարը մեր որերի միջադգային քաղաքականությունից ամենահզոր գործոնն և հանդիսանում: Նորհրդային Միության քաղաքականությունը խաղաղության քաղաքականություն և ինդուստրացման հնգամյա պլանն իրագործելու, գյուղական տնտեսության կոլեկտիվացման ու սոցիալիստական վերակառուցման մեծ աշխատանքները կատարելու համար խաղաղությունը մեղ նույնքան և հարկավոր, վորքան ողբ մարդու համար: Դա, իհարկե, բնավ չի նշանակում, թե մենք պայքար չենք մղում կապիտալիզմի դեմ: Սակայն սոցիալիստական կարգերի համար տարվող այդ կովում մեր լավագույն զենքը ստանոկներն և ու մեքենաները, մետաղի,

մեքենայաշինություն, ելեքտրական ուժի, քիմիայի հսկաներն են: Մեր հարձակումն է՝ «հնգամյակը 4 տարում», նոր ու նոր հնգամյակների իրականացումը՝ մինչև սոցիալիզմի իրականացումը: Մեր գեներլ ուժն է՝ մեր սոցիալիստական շինարարության վարակող ուրինակը — աշխատավոր մարդկության բազմամիլիոն մասնանների համար:

Այդ իմանում են ու հասկանում մեր թշնամիները: Նրանք մեր շինարարությունը այնպես են գնահատում, ինչպես, որինակ, այդ անում է Ֆրանսիական իմպերիալիստների որդան «Ամի դյու Պյուլլ» («Ժողովրդի բարեկամ») թերթը իր 1930 թվի փետրվարի 24-ի համարում:

«Յավա կղզու անցյալ տարվա ապստամբությունը, Հնդկաստանի ավելի ու ավելի սպառնալից դրությունը, աֆրիկական մի շարք գաղութներում յեղած հեղափոխական շարժման բռնկումները, Ֆիլիպինյան կղզիներում աճող հուզումները, և վերջապես, Հնդկաչինի ապստամբությունն ապացույց են, վոր ամենուրեք աճում է Մոսկվայի ազդեցությունը, վորը համախմբում է բոլոր դժգոհներին ու բացարձակ սպառնում է գաղութային պետությունների շահերին ու վարկին: Ժամանակ է գործի անցնելու»:

Կամ այնպես, ինչպես գերմանական բուրժուազիայի «Քյոլնիշե Ցայտունգ» թերթն է գրում.

«Վայ Ցեվրոպային, յեթե հնգամյա պլանը հաջողվի»:

Հասկանալի չե՞ թե ինչու յե «վայ» և ինչու «ժամանակ է գործի անցնելու»: Պայքարի ստրատեգիան սովորեցնում է, վոր հարձակման ժամանակ (իսկ իմպերիալիստները, շարունակ ջանք են թափում, վոր Նորհրդային Միության դեմ միացյալ հարձակողական ֆրոնտ սարքեն) ամեն մի դանդաղում կարող է ճակատագրական լինել հարձակվողների համար:

Ասենք, իմպերիալիստների ակտիվ գործողությունների պակասություն չի զգացվում: Իմպերիալիստներից կաշառված չինական գեներալների պատերազմը Ջին-Արեկյան յերկաթուղու վրա, յեկեղեցականների «խաչակրաց արշավանքը», հակախորհրդային ֆալշիֆիկաների կամպանիան

Ամերիկայում, և մեզ թշնամական դատական ակտերը Գերմանիայում ու Ֆրանսիայում, խորհրդային ղեկավարությունը Վարշավայում պայթեցնելու փորձը, ամբողջ կապիտալիստական աշխարհում բարձրացած լիտի վայնասունը «խորհրդային դեմպիլինգի» մասին, բուրժուական և սոցիալ-ֆաշիստական մամուլի կեղտոտ հեյուրանքները «ստիպողական աշխատանքի» մասին ՆՍՀՄ-յան անտառափթերուկների գործում և դրան հետևած սահմանափակումները և արգելքները խորհրդային արտահանության վերաբերմամբ մի շարք կապիտալիստական պետությունների կողմից, ամերիկական սենատոր տիւրանոզակ Ֆիշի ստոր վոտնձգությունները ՆՍՀՄ-յան դեմ, մեր դեմ բացահայտորեն ուղղված մի շարք «ազրարային կոնֆերանսները» Փոքր Աստանտի յերկրներում իմպերիալիստական Ֆրանսիայի «բարձր հովանավորություն տակ», «լապուասական» ֆաշիստական շարժումը Ֆինլանդիայում և այլն, և այլն — այս բոլորը պրոպագանդիստ գործողություններ են Նորհրդային Միության դեմ պատերազմ հարուցելու համար: Բոլոր այս պրոպագանդաներն իմպերիալիստներին հարկավոր են Նորհրդային Միության դեմ պատերազմ կազմակերպելու համար, վորպեսզի հնարավորություն ունենան Նորհրդային Միությունը մեղադրելու խաղաղությունը խախտելու մեջ, «կարմիր իմպերիալիզմի» մեջ, իսկ արտասահմանյան միլիոնավոր բանվորներին յես պահելու, վոր դուրս չգան Կարմիր բանակի ու Նորհրդային Միության պաշտպան:

Այսպես կոչված «Արդյունաբերական կուսակցություն» («Պրոմպարտիա») վերջերս կայացած դատավարությունը միանգամայն պարզորեն մերկացրեց ամբողջ աշխարհի առաջ այն վաղուց հայտնի, սակայն ամեն կերպ բուրժուական և սոցիալ-ֆաշիստական մամուլի ջանքերով քողարկվող ճշմարտությունը, վոր կապիտալիստական աշխարհը Պուանկարե-Բոիանի Ֆրանսիայի գլխավորությամբ և մի շարք այլ իմպերիալիստական պետությունների «բարենաճ մասնակցությամբ» տենդորեն պատրաստվում է ղինված ինտերվենցիայի ՆՍՀՄ-յան դեմ, ոգտագործելով վոչ միայն մեր հարևան ֆաշիստական պետությունների (Լեհաստան, Ռումի-

նիա, Լատվիա, Ֆինլյանդիա) հարձակողական ձգտումները և ուսական հակահեղափոխական եմիգրացիայի թափթիփուկներին («Տորգպրոմ»), այլ և ներքին հակահեղափոխական «ուժերը» հանձինս ֆլասարարների: Իսկ Արդկուսի դատավարութանը հետևած մի այլ դատավարութուն—հակահեղափոխական մենչևիկ-ֆլասարարների դատավարութունը պարզեց միանգամայն անհերքելի փաստերով, վոր պրոլետարական միակ պետություն — ԽՍՀՄ-յան դեմ պատրաստվող արյունոտ իրտերվենցիայի գլխավոր սպասարկուներին մեկն է համաշխարհային-սոցիալ-ֆաշիզմը հանձինս II Ինտերնացիոնալի և իր պարագլուխներ — Կաուցկու, Վանդերվելդեյի և այլ սոցիալ-լակեյներին: Պաշտպանելից մինչև Կաուցկի, Հոմի պապից մինչև II Ինտերնացիոնալ — ահա տնտեսական ճգնաժամի ճանկերում ջղաձգվող և հեղափոխական վերելքի կուռ ալիքներից սարսափահար իմպերիալիզմի միասնական ճակատը սոցիալիզմ կառուցող մեր Միության դեմ: Դատավարութունը կոնկրետ փաստերով, ամբողջ աշխարհի առաջ պարզեց, վոր II Ինտերնացիոնալի ագենտուրան մեր յերկրում մի խումբ մենչևիկներ, ֆինանսավորվելով վոչ միայն II Ինտերնացիոնալից, այլ և «Արդկուսակցութունից», նույնպես նպատակ էր դրել իրեն կործանել Խորհրդային իշխանութունը և մեր յերկրում վերականգնել նախկին կապիտալիստական կարգերը:

Այսպես ուրեմն, յեթե Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության քաղաքականութունից և եկոնոմիկայի կատարյալ որինաչափությամբ խաղաղության քաղաքականությունն է բղխում, ապա կապիտալիստական պետությունների քաղաքականությունից ուսյնալիս ի որինաչափությամբ Խորհրդային Միության դեմ իմպերիալիստական պատերազմի քաղաքականությունն է բղխում: Սոցիալիստական շինարարության ծագման գիծն անխուսափելիորեն խաչաձևվում է կապիտալիզմի ճգնաժամային անկման կոր գծի հետ՝ պատերազմի վճռական կետում: Այսոր այդ անխուսափելիութունն ավելի յե, քան յերեկ. վաղն արև

յերևան կգա ավելի ուժեղ չափով՝ քան այսոր, վորովհետև սոցիալիզմի Խորհրդային Միության մեջ ամրապնդվող դիրքերը մահացու վտանգ են ներկայանում կապիտալիստական աշխարհի համար, վորովհետև համաձայն Լենինի խոսքերի մեկն ու մեկը պետք հաղթել:

III

«Ով մոռանա մեզ միշտ սպառնացող վտանգի մասին, վորը չի դադարի՝ քանի զոյութուն ունի համաշխարհային իմպերիալիզմը — ով այդ մոռանա՝ նա կմոռանա մեր աշխատավորական հանրապետության մասին (Խորհուրդների Համառուսական VIII համագումարում Լենինի արտասանած ճառից)»:

«Մեր որբերի պատերազմը՝ ժողովրդական պատերազմ է» (Լենին):

Ժամանակակից միջազգային՝ դրությունից այն է բղխում, վոր Խորհրդային Միությունը պետք է ամեն որ, ամեն ժամ պատրաստ լինի իմպերիալիստների հարձակումը յետ մղելու: Մինչդեռ մեր շարքերում դեռևս այնպիսի վերաբերմունք է գերակշռում դեպի սպառնացող վտանգը, վոր կարծես այդ վտանգը մի ինչ-վոր հեռավոր հեռանկար է, վորի մասին յերբեմն միայն, կամ Խորհրդային Միության դեմ ուղղված պրովակացիոն յելույթների բույներին միայն կարելի յե հիշել: Դա մասամբ նրանով է բացատրվում, վոր մենք ամբողջապես դեպի սոցիալիստական շինարարության խաղաղ նպատակներն ենք ձգտում: Սակայն վոչ մի կերպ չի կարելի արդարացնել այն «բռնկողիչ շինան», ինքնորոշումն ու բարենդությունը, վոր յերբեմն գերիշխում են դեպի պատերազմի վտանգը յեղած վերաբերմունքի մեջ: Մենք սոցիալիստական կարգերի համար կռվող չափազանց անհեռադիմաբարձիկներ կլինեյինք, յեթե մի բույն անգամ մոռանայինք, վոր պետք կլինի անխուսափելիորեն այդ կարգը պաշտպանել զենքը ձեռքերիս, վոր պատերազմի ժամը կարող է խփել ամեն մի բույն:

Սակավել ևս անթույլատրելի յե ռազմական վտանգի, — ապա ուրեմն և Միության պաշտպանունականության ամ-

րապնդման խնդիրները թերազնահադուժը այն պատճառով, վոր պետական սլանավորման մեր պայմաններում պաշտպանության խնդիրները լիովին համատեղելի չեն տնտեսական շինարարության խնդիրների հետ: Վերցնենք, որինակ, պատերազմ վարելու տեխնիկական միջոցները: Կարմիր բանակին հարկավոր են ժամանակակից ռազմա-տեխնիկական միջոցներ — այրողալաններ, տանկեր, զազեր, ռադիո, ելեկտրական ուժ և այլն: Բայց միթե այրողալանը հաղորդակցության միջոց չէ, տանկը տրակտոր չէ, զազը, քիմիական աղերը միջոց չեն դաշտերի ֆլասատուների դեմ պայքար մղելու, ռադիոն ու ելեկտականությունը կուլտուրական հեղափոխության գործիք չեն: Միթե ռազմա-տեխնիկական միջոցներ արտադրելու համար անհրաժեշտ ելեկտրական ուժը, մետաղը, ֆաբրիկներն ու գործարանները ջոկ բաներ են, քան նրանք, վոր հարկավոր են մեզ սոցիալիզմի խաղաղ շինարարության նպատակների համար: Իհարկե՞ վնչ: Բայց յերբ մենք, որինակ, ռադիո-կայանների ու ելեկտրոկայանների ցանց ենք կառուցում, ապա պետք է հաշվի առնենք և պաշտպանության խնդիրները: Բարձր լարվածության ելեկտրական հոսանքը, վորը անցնում է առանց լարի, կարող է յեթերում մահաբեր զենք հանդիսանալ թշնամու այրողալանների համար: Հետևաբար, ռադիո-ելեկտրոկայանների դասավորումն ու գործությունը կարող են և պետք է այնպես լինեն, վոր կարողանան յերկրի կենսական կենտրոնների պաշտպանության խնդիրներին ծառայել:

Վերցնենք մի ուրիշ որինակ: Խորհրդային Միությունը առաջիկա ամենամոտ տարիներում պետք է լայնորեն ծավալե քիմիական արդյունաբերությունը: Այստեղ առանձին ուշադրություն պետք է դարձնել սովխոզներում ու կոլխոզներում քիմիական արտադրությունների զարգացման վրա, վորովհետև գյուղատնտեսության մեջ միայն քիմիական պարարտանյութեր գործադրելով բերքավելությունը կարելի չէ 50 %-ով բարձրացնել: Բայց յեթե այդ շատ մեծ խնդրի լուծումը կապենք պաշտպանության խնդիրների հետ, ապա դա նշանակում է, վոր ամենից առաջ պետք կլինի զարգացնել այն քիմիական աղերի արտադրությունը, վորոնք կկիրառվեն

վոչ միայն գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ, այլև ռազմական արտադրության՝ պատերազմի դեպքում:

Սոցիալիզմի կառուցումը ամբողջ Խորհրդային Միության մեջ տարվում է Համկոմկուսի ղեկավարությամբ, տասնյակ միլիոնավոր պրոլետարներ, կոմունարների ու կոլխոզնիկների ձեռներով: Նույն այդ ձեռներով ել պետք է կառուցվի և՛ Խորհրդային Միության պաշտպանությունը: Խաղաղ դադարի ժամկետը լրանում է: Մոտենում է կապիտալիստական աշխարհի դեմ ռազմական պայքարի պատմականորեն անխուսափելի դարաշրջանը: Վոչ մի կասկած չկա, վոր Խորհրդային Միության աշխատավոր մասսաները մեծագույն խանդավառություն ու պատրաստականություն ցույց կտան՝ բոլոր միջոցներով իրենց պրոլետարական պետությունը պաշտպանելու: Սակայն ժամանակակից պատերազմի մեջ գլխավորը մարդկային սրտերի բաբախումը չէ, այլ մեքենաների պաղ կրճտոցը:

Մենք կապահովենք մեր հաղթանակը, յեթե մեր տնտեսական շինարարությունը տոգորենք պաշտպանության կառուցումով, յեթե մեր բոլոր կենսական կենտրոնները թշնամու արկերի համար անխոցելի պողպատե դրահով պատենք: Դրա համար պետք է սոցիալիզմ ու սոցիալիստական պաշտպանություն կառուցողների տասնյակ միլիոնավորները հասարակական կազմակերպություն ստեղծել: Այդպիսի կազմակերպություն է հանդիսանում և ավելի մեծ չափերով այդպիսի կազմակերպություն պետք է դառնա Ռսոավիաքիմը:

II. ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ- ԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ոստավիաքիմի 2-րդ Համամիութենական համագումարը, Խորհրդային Միության միջազգային ու ներքին դրություններից յեկնելով, բնականորեն պարտավորեց հետևյալ մարտական խնդիրները:

ՀՍԽՀ — ՀԵՐԱ

Մ. Ա. Մառնիկան
Ա. ՄԱՍՆԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1) աշխատավորների ռազմական նախապատրաստությունը:

2) ընկերություն անդամների ակտիվ մասնակցությունը յերկրի խնդուստրացման ու քիմիացման աշխատանքին:

3) ընկերություն լայն մասնակցությունը գյուղական տնտեսության կոլեկտիվացման խնդիրների հաջող իրականացման գործին ու կուլակություն, վորպես դասակարգի, լիկվիդացիային՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

4) ընկերություն մասնակցությունը սոցիալիզմ կառուցողների նոր կադրեր պատրաստելու գործում:

Այդ հիմնական խնդիրների իրականացումը պահանջում է Ոստավիաքիմի շարքերում ու նրա շուրջը կազմակերպել արդյունաբերական պրոլետարիատի, սովխոզների բանվորների, բատրակների, կոլխոզնիկների, մենատնտեսավար չքավորների ու միջակների ամենալայն մասսաները: Հնգամյա պլանի՝ համաձայն՝ ընկերության անդամների թիվը պետք է հասցվի 17 միլիոնի: Ավելի լայն մասսաներ պետք է ընդգրկվեն Ոստավիաքիմի աղղեցությունում ու նրա գործնական աշխատանքին քաշվեն:

Ընկերություն ամբողջ աշխատանքը մասսայականություն ուղիքի վրա դնելու, այդ աշխատանքում միլիոնավոր բանվորների ու գյուղացիության գիտակից ու ստեղծագործական մասնակցության համար հարկավոր է որինակելի կերպով դնել ագիտացիոն-պրոպագանդիստական ու դաստիարակչական աշխատանքը: Հասկացնել նոր պատերազմների մեծագույն սպառնալիքն ու խորհրդային Միության դեմ անմիջական հարձակում գործելու վտանգը, միլիոնավոր մարդկանց գիտակցությունը հասցնել խորհրդային Միության պաշտպանունակության ամեն կերպ ամրապնդման, ոգազնացային ու քիմիական շինարարության հսկայական խնդիրները, մի խոսքով՝ Ոստավիաքիմի խնդիրներն ու դերը — այդ բոլորն անել՝ նշանակում է յերթե փոխ 100% -ով, ապա կիսով չափ ապահովել ընկերություն առաջ դրված խնդիրների իրագործումը:

Մինչդեռ, ընկերություն ագիտալրոպաշխատանքի ներկա վիճակը, ինչպես այդ հաստատել է Ոստավիաքիմի համար

գումարը, սակավ բացառություններ, փոչ իր թափով է փոչ ել վորակով էի կարելի բավարար համարել: Խորհրդային Միության միջազգային դրություն սուր վատացման մոմենտներին՝ մի անգամ է, վոր մասսաների տարերային շարժման դիմաց ագիտալրոպաշխատանքը միանգամայն անբավարար է գտնվել մասսայական ակտիվությունն սպասարկելու է բարձր մակարդակի վրա կազմակերպչականորեն ամրապնդելու այդ ակտիվությունը: Իսկ սովորական ժամանակի՝ ընկերություն աշխատանքի այդ կարևորագույն մասը հաճախ ծածկված է մեացել գործնական աշխատանքի այլ տեսակներով, վոր ուղղակի տանում է դեպի գործամոլություն ու քաղաքական հեռանկարի կորուստ, առանձին դեպքերում ել՝ դեպի դասակարգային գծի աղավաղումը գործնականում:

Ընկերություն մասսայական աշխատանքն ու նրա կարևորագույն դեմքը — ագիտացիան ու պրոպագանդը ներկայումս կարևոր նշանակություն են ստանում սովխոզներում, կոլխոզներում ու ռայոնական մեքենատրակտորային կայաններում: Գյուղատնտեսության բարձր ագրոտեխնիկական բաղադրի վրա լայն ճակատով ծավալվող սոցիալիստական վերակառուցումն ամենից առաջ իր ամբողջ հասակով դնում է գյուղատնտեսական արտադրության քիմիացումն ու մոտորացումը: Սովխոզները, կոլխոզներն ու մեքենատրակտորային կայանները չափազանց նպաստավոր հող են ստեղծում Ոստավիաքիմի համար այդ ուղղությունում մասսայական աշխատանք տանելու: Ընկերությունը միմիայն այդ աշխատանքների շուրջը կարող է է պետք է կազմակերպել գյուղի միլիոնավոր աշխատավորներին:

Գյուղատնտեսություն հանրայնացրած հատվածը պակաս նպաստավոր պայմաններ էի ստեղծում նույնպես է խորհրդային Միության ռազմական կարողության անմիջական շինարարության բնագավառում: Մանր-սեփականատիրական արտադրությունից խոշոր, կոլեկտիվ արտադրության անցնելուն անպայման ուղեկցում է է մասսայական բեկումը գյուղացիական մասսաների հոգեբանություն մեջ, վորով պրոլետարական պետություն, նրա տնտեսական ու ռազմական կարողության շահերը անսահման մոտիկ ու

հասկանալի յեն դառնում նրանց: Հենց դրանով ել ստեղծվում են բոլոր նախապայմանները, վորով այժմ գյուղում ոստավիաքիմիական ագիտացիան ու պրոպագանդը անհամեմատ ավելի դրական վերաբերմունքի կհանդիպեն, քան յերեկոցե առաջ:

Սովխոզները, կոլխոզները, մեքենա-տրակտորային կայանները կարող են բոլոր անհրաժեշտ պայմանները ստեղծել մասսայական աշխատանք ծավալելու այնպիսի մասշտաբով, վորոնց մասին առաջ յերազել ել չեր կարելի: Ոստավիաքիմի գյուղական, 10—12 հոգուց բաղկացած բջիջի հին տիպը, վորի համար ընկերություն մի ամբողջ շարք խնդիրներ ուժերից վեր էին, անցյալի գիրկն ե ընկնում: Ոստավիաքիմի այսօրվա ե վաղվա բջիջը մի գործիչ կոլեկտիվ ե, վորի մեջ առատորեն մարդ ու միջոց կգտնվեն՝ ոստավիաքիմիական աշխատանքը գյուղում ավելի բարձր աստիճանի վրա դնելու համար: Ոստավիաքիմի սովխոզային ու կոլխոզային կազմակերպությունները պետք ե ընկերության ամբողջ աշխատանքի հիմնական հենակետերը հանդիսանան վոչ միայն գյուղատնտեսության հանրայնացրած, այլև ամբողջ անհատական հատվածի համար:

ՊԱՅՔԱՐ ՈՍՈՎԻԱՔԻՄԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՑԱՅՏՈՒՆ ԳԾԻ ՀԱՄԱՐ

Վերեւ ասածներից պարզ ե, վոր Սորհրդային Միության պաշտպանությունը կառուցելու գործը վոչ միայն անբաժանելի յե սոցիալիստական շինարարության ամբողջ պրոցեսից, այլ ընդհակառակը՝ որդանապես կապված ե այդ պրոցեսի հետ: Վերեւում այդ մենք ապացուցեցինք տնտեսական շինարարության որինակներով: Իրան վոչ պակաս պերճախոս ապացույց կարելի յե գտնել ե քաղաքականության, առանձնապես կոլեկտիվացման ու համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակի, վորպես դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականության մեջ: Կուլակն իր ամբողջ դասակարգային բնույթով վոխերիմ թշնամի յե վոչ միայն կոլեկտիվացմանը, այլև սոցիալիզմ կառուցող, սոցիալիզմի

համար իմպերիալիստական ուժերի դեմ պայքարող ամբողջ պրոլետարական պետությունը: Մոտերս լեհական թերթերում մենք հնարավորություն ունեցանք բուրժուական քաղաքագետների հետաքրքրական հայտարարությունները կարդալու, ուր ասված եր.

«Մենք գյուղացիական (կարգն կուլակային. Ա. Ս.) ապստամբություններ կառաջացնենք, որինակ, Ուկրաինայում, ե կաշխատենք հետո այդ ապստամբությունները վերածել արտաքին պատերազմի Սորհրդային Միության դեմ»:

Իմպերիալիստները գիտեն, թե ում վրա հենվեն Սորհրդային Միության դեմ պատերազմ լինելու դեպքում: Կուլակը նրանց առաջին ե ամենահուսալի դաշնակիցն ե: Բայց չե՞ վոր դա ռազմական հաջողության վերջնական գրավականը չե: Քաղաքացիական կովի տարիներին Կարմիր բանակը 14 կապիտալիստական պետությունների դեմ եր կընվում: Վատ զինված, իր զենքին կարգին չտիրապետող, ջահել հրամկազմով՝ այնուամենայնիվ նա հաղթեց: Ինչո՞ւ: Վորովհետեւ, ասում եր Լենինը, «բուրժուազիայից մենք խեցինք, նրա զինվորին»: Իմպերիալիստները նույնպես, ինչպես տեսանք, կցածկանային մեկն ու մեկի վրա հենվել մեզ մոտ: Նրանք յերազում են գծություն գցել Սորհրդային Միության պրոլետարիատի ու գյուղացիության միջև, նրանք բացի կուլակներից ուրիշ դաշնակից չունեն: Բայց հենց դրա համար ել կուլակություն, վորպես դասակարգի, համատարած կոլեկտիվացման հիման վրա լիկվիդացիայի յենթարկելու խնդիրը ներկա մոմենտում արդեն վոչ միայն տնտեսական-քաղաքական, այլև ռազմա-քաղաքական խնդիր ե: Հենց այդ պատճառով ել Ոստավիաքիմի բջիջները գյուղում պետք ե ամենաակտիվ կերպով մասնակցեն այդ խնդրի լուծմանը, յերկրի պաշտպանության կազմակերպության շահերը նկատի ունենալով:

Գյուղում դասակարգային պայքարը սաստկանալու պայմաններում Ոստավիաքիմի սովխոզային ու կոլխոզային կազմակերպությունները պետք ե այդ պայքարի առաջավոր դերերում կանգնեն: Սակայն դեռ քիչ չեն ընկերության

կազմակերպությունները գյուղում, վորոնք դասակարգային ճակատում անընդունակ են դուրս գալիս: Ոստավիաքիմի բջիջները, նույնիսկ ռայոնական ու շրջանային խորհուրդների աշխատանքի մեջ կոծկելու և ուղղակի դասակարգային գիծն աղավաղելու բավականաչափ շատ դեպքեր են լինում: Հաճախ այդ դեպքերը հետեանք են լինում այն բանի, վոր անչափ տարվում են գործի առևտրական կողմով ու գործաժուլությունը, վորը յերբեմն ամենազգվելի ձևեր է ընդունում:

Սարատովում ոստավիաքիմիական քյալագոյունները բանին այնտեղ են հասցրել, վոր «Ագիտ-կաֆե» անունով մի խիստ յեկամտավոր ձեռնարկություն են կազմակերպել: «Ոստավիաքիմ» ժուրնալի թղթակիցներից մեկը ժամանակին այդ՝ «ուղաշտպանություն գաղափարներով առևտրի» խա-նութն այսպես էր նկարագրում.

«Չնայած, վոր վաղուց է վեր սրճարանում «ագիտ» մասից վոչինչ չի մնացել, այնուամենայնիվ ցուցանակի վրա դեռ «կաֆե»-յի կողքին «ագիտ»-ն է փայլում, իսկ պոռնիկները, վոր տամամեկից հետո յեն հավաքվում և ազատ սակարկում են ազա՛ ջահելների հետ մինչև յերկուսը, «հիմնական կոնտինգենտ» դարձան, չնայած ցուցանակին ու լոգուններին»:

Առաջվա պես փայլում են «ագիտ-կաֆե»-յի ցուցանակները, «Միլվայից» ու «Բայադերկայից» յերգում — «կաքավում» է ռադիոն, առաջվա պես ուրախ հաճախորդները շրջապատված են պլակատներով ու նկարներով և առնետը, վիզը ձգելով, զարմացած նայում է իր անսովոր թշնամիներին:

«Յեվ այդ բոլորի վրա հանգիստ ու անհեթեթ փայլում է — «Ոստավիաքիմ» — Խորհրդային Միության խաղաղ աշխատանքի ու պաշտպանության նեցուկն է»:

Ի հարկե, Սարատովի խայտառակ դեպքը կմնա միայն իբրև յեղակի մի դեպք: Բայց դա ամենևին պատահական չէ: Գործաժուլությունը ավելի վայելուչ, բայց վոչ պակաս ֆասակար ձևերով անպայման ծագում է այնտեղ, ուր ընկերությունը փոքրված է լինում ներս խցկված խորթ տարրերով: «Ոստավիաքիմ» ժուրնալի մի ուրիշ թղթակիցը ասա

թե ինչ է գրում ընկերություն Սիբիրի կազմակերպությունների աշխատանքի մասին 1930 թվի մարտի 20-ի №-ում.

«Մեր ոստավիաքիմիական կազմակերպությունները մասսաների ստեղծագործական խանդավառության ու նախաձեռնություն յետին պլանին են գտնվում:

«Մեր կազմակերպությունների մեծ մասը նեղ դելյա-չեստվոյով են զբաղվում. նրանք «ոստավիաքիմիական» կարուսելներ, բիլիարդներ են բաց անում, վոլիմպիական հրացանաձգություն են կազմակերպում և այլն»:

Ինչից են ոստավիաքիմիական կազմակերպությունների աշխատանքում կուսակցական գծի այդպիսի աղավաղումների առաջանում, — ասում է նույն թղթակիցը: Նրա ասելով՝ ընկերության Սիբիրի կազմակերպությունների մեջ «վոչ միայն շարքային, այլև նույնիսկ շրջանային ու ռայոնական աշխատանքի վրա ձայնագուրկներ են յեղել»:

Ինչպե՞ս կարող է պայքարել դասակարգային ճիշտ գծի համար մի կազմակերպություն, վորի ղեկավարությունը կուսակների ձեռքում է գտնվում: Իսկ այդպիսի կազմակերպություններ կան: Ղյադեմսկի շրջանի Լիդեշկովսկի վոլոստի Ոստավիաքիմի բջիջի 58 անդամներից 40-ը ձայնագուրկ են դուրս յեկել: Նրանք բոլորը գտված, հեռացված են Ոստավիաքիմից:

Խիստ բնորոշ է Ալեքսեյեվսկոյե շրջանային գյուղի (Սիբիրում) դեպքը: Այնտեղ վոչ մի կերպ չեն կարողացել ռադիոնական ՈՍՈ-յի քարտուղարին գտնել, իսկ յերբ գիմել են կոմսոմոլի ռայկոմի քարտուղարին, այսպիսի պատասխան են ստացել.

«Մեր քարտուղարը կուսակների հետ ուր վոր կորել է («Սիբիր նա ստրաժե» թերթից, 1930 թ. մարտի 30):

Թե խորթ տարրերն ինչ նպատակներով են ներս խցկվում Ոստավիաքիմի կազմակերպությունների մեջ, ցույց է տալիս մոտերս Բիրսկում պատահած դեպքը: Այնտեղ —

«Խորհրդային ապարատի գոման ժամանակ՝ պարզապես մեղ համար փասակար տարր հանդիսացող առանձին զավածները բողոքարկել են գոող հանձնաժողովներին, իրանց լոյալությունն ապացուցելու հա-

մար Ոստավիաքիմի տոմս ներկայացնելով: Յեւ իրանք ել «բոլորի հետ միասին» կողմնակից են Սորհրդային Միության սահմանների պաշտպանության («Կրասնայա Բաշկիրիա» թերթից):

Բոլոր այս յերևույթներին պետք է անողորմ կռիվ հայտարարել: Ոստավիաքիմի գյուղում տարվող աշխատանքի դասակարգային ուղիղ գիծը ապահովելու կոչված են ընկերության սովխոզային ու կոլխոզային կազմակերպությունները, վորովհետև այնտեղ ել տեղ չեն ունենա վոչ կուլակները, վոչ ել ձայնադուրկների վորևե այլ տեսակը: Բայց այդ խնդիրը կատարել կարելի չէ միայն մի պայմանով. — քարոջ չգալ չքավորների ու միջակների լայն մասսաների ստեղծագործական խանդավառության ու նախաձեռնության պոչից, այլ կուսակցության հետ քայլել այդ ակտիվության բարձունքում — մասնակցել գյուղական տնտեսության կոլեկտիվացման ու սոցիալիստական վերակառուցման ամբողջ աշխատանքին: Իրանք, մասսաները ցույց են տալիս այդ աշխատանքի ուղիները:

«Լիպեցկի ոսյոնի Լենինյան գյուղխորհրդի կոլխոզնիկները վորոշում են կայացրել՝ բոլորը առանց բացառության անդամագրվելով՝ աշխուժացնել Ոստավիաքիմի աշխատանքը, ռազմա-հրացանաձիգ, ռազմա-քիմիական ու սանիտարական կրոժոններ կազմակերպել... «Հընգամյակ» այբրոպլանի համար հանգանակություն անել և այլն («Կրասնոյե զնամյա» թերթից, Յեկեց):

Կատայեվսկի «Կրասնիյ զեմլիդեկեց» գյուղատնտեսական կոմունայի անդամների ընդհանուր ժողովը վորոշել է. — կոմունայի բոլոր անդամները պետք է Ոստավիաքիմի բջիջի անդամ գրվեն, վորպեսզի հարկավոր բոպեյին արժանի հակահարվածը տան Սորհրդային Միության թշնամիներին» (Չիտայի թերթերից):

Սովխոզների բանվորական մասսաների ու կոլխոզնիկների այսպիսի նախաձեռնության անսահման հնարավորություններ կան: Այստեղ մասսայական աշխատանքի ամբողջ բովանդակությունը պետք է լինի ճանկել մասսաների այդ հզոր թոփըն ու խելացիորեն ուղղել դեպի դիտակցական

ու ակտիվ մասնակցություն Սորհրդային Միության պաշտպանությունը կառուցելու գործին: Յեւ վոչ միայն այդ: Գյուղում Ոստավիաքիմի դասակարգային ճիշտ գիծն ապահովելու, մասսաների լայն մասնակցությամբ գյուղական բջիջները մաքրելու ու նորոգելու համար՝ պետք է ամբողջ աշխատանքը ինքնաքննադատության կրակի տակ դնել: Միայն այդ կրակի մեջ կարելի չէ կռել Ոստավիաքիմի կազմակերպությունների մասսայական մարտունակությունը, միայն նրա մեջ կարելի չէ դասակարգային ճիշտ գիծ կոփել:

ՍՈՎԷՏՆԵՐՆ ՈՒ ԿՈԼԽՈԶՆԵՐԸ — ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԳԱՐԴՈՒՄ

Ոստավիաքիմի գյուղի աշխատանքի ամբողջ անբարենաջողությունը մինչև այժմ գլխավորապես նրանից է բղխել, վոր գյուղացիական ահատական ցանուցիր տնտեսությունների, գյուղացիական հին հասարակայնության պայմաններում, — հասարակայնության, վորի ամբողջ շահերը կենտրոնացած էյին անհատական թզուկ տնտեսությունների շուրջը, — չափազանց դժվար եր ոստավիաքիմիական աշխատանքի մասսայական ձևերը ծավալել: Բոլորովին այլ անսահման ավելի բարենաջող պայմաններ են ստեղծվում հանրայնացրած սեկտորում: Այստեղ թե մարդկային և թե նյութական միջոցները նշանավոր չափերով ավելի լայն են: Իսկ վոր գլխավորն է՝ այստեղ միանգամայն այլ հոգեբանություն է ստեղծվում մարդկանց մեջ, վորոնք արտադրության միջոցների հանրայնացման հետ միասին ավելի կամ պակաս չափերով հանրայնացում են և՛ իրենց աշխատանքը, դրվում են կոլեկտիվ մտածելու, տնտեսական ու կուլտուրական շինարարության հարցերը ամբողջ հասարակությամբ վճելու անհրաժեշտության պայմանում: Այստեղից ծագում է ու ամրապնդվում կոլեկտիվի շահերի կապն ու անբաժանելիությունը՝ պրոլետարական պետության շահերից, ամբողջությամբ վերցրած: Մոտիկ և հասկանալի չեն գառնում և Ոստավիաքիմի խնդիրները Սորհրդային Միության պաշտպանության կառուցման գործում:

Թե ինչ է յեղել և թե ինչ կա դեռ աշխտեղ, ուր սով-
խողներն ու կոլխոզները դեռ ոստավիաքիմիական աշխա-
տանքի բազա չեն դարձել, այդ ցույց է տալիս հետևյալ,
դժբախտաբար չափազանց տիպիկ ու տարածված պատկերը՝

«Ոստավիաքիմի Սմոլիլինսկի (Որենբուրգի ռայոն)
բջիջն ունի 43 անդամ, վորոնցից 8-ը՝ կին... Բջիջում
գրականություն չկա: Պլակատներ և ուսումնական պի-
տույքներ նույնպես չկան: Միայն 1861 թվի յետագծ-
յան հրացան կա և յերկու ել ժանդոտած, սղոց դառած
թուր: Կոմսոմոլի տեղական բջիջը Ոստավիաքիմի գործով
չի հետաքրքրվում: Բջիջի ամբողջ աշխատանքը փոք-
րիկ քանակութամբ թուղթ ու թանաք ոգտագործելում
և կայանում» («Մմիչկա» թերթից):

Բայց ահա ինչպես է առաջ շարժվում աշխատանքը նույն
Որենբուրգի շրջանում, կոլեկտիվացման հենց առաջին իսկ
բայից:

«1.150 կոլխոզնիկ դառնում են ոստավիաքիմիական-
ների Կազմվել և 26 բջիջ. խրճիթ-ընթերցարաններում
ազգական անկյուններ են բացված: 13 հրաձիգ կրու-
ժոկներ են աշխատում: Ոստավիաքիմի անդամներեց
120 հոգի հեռակա ազգական ուսմունքով են պարա-
պում: Ոստավիաքիմի վիճակախաղի տոմսերի առաջին
պարտիան տարածվել և անմիջապես: Ոստավիաքիմիա-
կանները սերմ արտահանելու ջոկատներ են կազմակեր-
պել» և այլն:

Դարձյալ մի որինակ բերենք, վորը պատկերացնում է,
թե նույնիսկ ռայոնական գյուղական կենտրոնները շատ
անգամ ինչպիսի դրություն մեջ ելին լինում: 1930 թվի մար-
տին, Ոստավիաքիմի Կուրսկի շրջանային խորհուրդը քննել
և Որոյանի ռայոնական կազմակերպության աշխատանքներն
ու ահա թե ինչ է գտել.

«Վոչ վոք Որոյանում չկարողացավ հիշել, թե իրանք
հում են ՈՍՈ-ի ռայխորհրդի ու վերստուգիչ հանձնաժո-
ղովի անգամ ընտրել: 1929 թվի մարտ ամիսին ՈՍՈ-ի
ռայխորհուրդը ընտրելուց հետո՝ բոլոր արձանագրություն-
ները մի ընկերով թղթապանակում ելին գտնվում. այդ

ընկերը դյուղ և զնացել, արձանագրությունները չի
թողել, ուստի և մենք չենք կարող ասել, թե մեզնում
ով է ռայխորհրդի անգամ ընտրվել» — այսպիսի բա-
ցատրություն են տվել... Ամբողջ տարին պրեզիդիումին
ու վերստուգիչ հանձնաժողովը չեն աշխատել, վոչ մի
անգամ չեն հավաքվել...

Որոյանի ռայխորհրդի աշխատանքի մասին ամենից լավ
խոսում են հետևյալ տողերը.

«Ռայխորհրդի վրա գրված եր յերեք հրացան: Յերե
վերջապես ՈՍՈ-ի գործիչներեց մեկի հիշողության «գեր-
մարդկային» լարումով իմացվում է, թե վորտեղ են
գտնվում հրացանները, ապա դուրս և գալիս, վոր նրան-
ցից մեկի փողում ամենայն հանգստությամբ սարգերի
ընտանիք և բուն դրել: Յերկրորդ հրացանի միայն
ագուստն եր մնացել... («Կուրսկայա Պրավդա» թերթից):

Ահա այսպիսի, ներողություն, «ղեկավար» որդանները
վերջնականապես սպանել են գյուղի ոստավիաքիմիական
կազմակերպությունների ամեն մի նախաձեռնություն ու
ինքնագործնեյություն: Բարեբախտաբար, հասել է «Որոյա-
նովչինայի» վախճանը: Կոլխոզնիկների ու կոմունարների
մասսաներում մի ինչ վոր նոր բան է ստեղծվում դեպի Ոստ-
ավիաքիմը յեղած վերաբերմունքի մեջ: Այդ նորը ավելի ու
ավելի հաճախ և յերևան գալիս այսպիսի վորոշումների մեջ:

— Բոլորը անհապաղ պետք է մտնեն Ոստավիաքիմ:

— Կարգի գցել ազգական աշխատանքը գյուղում:

— Ծավալել ազգական, քիմիական, հրաձգային ու
սանիտարական կրոժոկների աշխատանքը:

— Ամենակալով կերպով մասնակցել ցանքսային կամ-
պանիային և այլն:

Այդ են ասում վոչ միայն բազմաթիվ բանաձևերն, այլ
և ինքը կյանքը:

Որենբուրգ-Չույսկի շրջանի Ոյալանի ռայոնում առաջա-
գրված է յեղել ախտահանել 5.600 ցենտներ սերմացու հա-
ցահատիկ: Ոստավիաքիմի բջիջներն արտահանել են 60.000
ցենտներ: «Այժմ վորոշ տեղերում ավելի շատ ցույց կտան,
թե ուր է ապրում Ոստավիաքիմի բջիջի նախադահը, քան

թե՛ գյուղխորհրդի նախագահի խրճիթը»։ — այդպես են ասել Որեխովո-Ջուլիսի պատվիրակները Ոստավիաքիմի Մոսկվայի շրջանի 1930 թվի մարտի 21—22-ի խորհրդակցություն ժամանակ։

Այս բոլորը ցույց է տալիս, վոր գյուղի ոստավիաքիմիական աշխատանքում յեղած նախկին կուստարականությունը, որլոմովչինային, քնհածությունը պետք է վերջ տալ և վերջ տալ անհապաղ։ Ինքը, մասսանների տնող ալտիվությունն է այդ պահանջում։ Մասնայական աշխատանք ծավալելու միջոցներ ու հնարավորություն կգտնվեն։ Սակայն, կգտնվեն նրանք միայն ընկերության նոր — սովխոզային ու կոլխոզային միավորումների մեջ։ Անշուշտ, նրանց ընդառաջ կգնան և գյուղատնտեսական պետական ու կոոպերատիվ կազմակերպությունները, վորոնք խիստ շահագրգռված են ոստավիաքիմիական բջիջների գյուղի աշխատանքով։ Այդ են վկայում, որինակ, Կամեն քաղաքի (Միբիր) կոլխոզմիության, սպառմիության, պրոֆմիությունների և մյուս կազմակերպությունների միջոցները։ Այդ կազմակերպությունները միջոցներ են գտել շրջանի կոլխոզներին հարյուրավոր նեղանցք հրացան, տասնյակ հազարավոր փամփուշտ, հարյուրավոր հակազազ, ուումը, ուղեմական տիպային անկյունակներ ու հազար ուերի փող բաց թողնելու։

Սովխոզներն ու կոլխոզները ոստավիաքիմիական աշխատանքի հենակետերը, նրա մարտական բարձունքներն են գյուղում։ Բայց նախ՝ հարկավոր է նվաճել այդ բարձունքները և ապա՝ դրանց զարձնել շրջապատող գյուղացիության լայն մասսաների վերաբերմամբ որինակելի, առաջնորդող բարձրություններ։ Դեռ ագիտացիոն-պրոպագանդիստական ու կազմակերպչական ահագին մասսայական աշխատանք կա կատարելու։ Ռազմական որինակելի անկյուններ, պաշտպանության տներ ստեղծել, ռազմական ու տեխնիքական ղեկավարների կադրեր պատրաստել, միջոցներ մոբիլիզացիայի յենթարկել պաշտպանության համար, — այստեղ ընկերության սովխոզային ու կոլխոզային կազմակերպությունների համար անկարելի վոչինչ չկա, բայց այդ բոլորը քիչ ջանքեր չի պահանջի, մանավանդ սկզբնական շրջանում։

Այդ խնդիրների իրականացման միակ ուղին է — բարձրացնել մասսաների ակտիվությունը, նրանց ստեղծագործական վերելքը լծել Ոստավիաքիմի ամբողջ աշխատանքին։ Այն ժամանակ սովխոզներն ու կոլխոզները խորհրդային Միության սոցիալիստական պաշտպանության ավանգարդում կկանգնեն՝ ֆաբրիկների ու գործարանների հետ մի շարքում։

ՊԱՅՔԱՐ ԽՍՂԱՂՈՒՅԱՆ ՀԱՄԱՐ ՈՒ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Գոյություն ունի մի հին, անհեթեթ ասացվածք. — «յեթե խաղաղություն ես ուզում պատրաստվիր պատերազմի»։ Յերբ խորհրդային Միության պաշտպանության մասին ես խոսում, շատերը խիստ անաշուղ կերպով աշխատում են այդ ասացվածքը կրկնել ամեն անգամ, ամենևին չնկատելով, վոր այդ ասացվածքը նույն չափով արգասիք է բուրժուական հասարակության, վորքան և ինքը՝ պատերազմը։ Յեվ, հիրավի, լեթե դատենք այդ ասացվածքի համաձայն, ապա պետք կլիներ ասել, թե կապիտալիստական յերկրներն ակներև կերպով շատ են խաղաղություն ուզում, քանի վոր այսպես ուժեղ պատրաստվում են պատերազմի։ Արտասահմանում խաղաղության մասին շատ են հոգում. այնտեղ այդ բանի համար նույնիսկ հատուկ հիմնարկություն է ստեղծված — Ալգերի Լիգան, բայց... ավելի լավ է, թող այդ մասին խոսե լեհական սենատոր Կոզիցկին. — նա այդ հարցերում մեծ մասնագետ է։ Յեվ նա Վարշավայում խորհրդային դեսպանանսատունը պայթեցնելու փորձի մասին այսպես է գրել.

«Այն դժնապանը, վոր դեպի լիազոր ներկայացուցչության ծխնելույզը տանող լարն է գտել, խաղաղություն պահպանելու գործում ավելի մեծ դեր է խաղացել, քան ամբողջ Ազգերի Լիգան»։

Պատրիկ ասացվածքի իսկական իմաստը բոլորովին պարզ է. — ինչքան ավելի հեշտ է խաղաղության դրոշակի տակ զրահանավեր շինելը, քան նույնն անել պատերազմի բացարձակ պատրաստություններ տեսնելու ուղիով։ Ասացվածքը հին է ու ծեծված, սակայն մինչև այժմ կրկնվում է

հազար ու մի ձևերով, և սոցիալ-պատրիստների բերանում ագիտացիայի շատ սիրած մի պրելյում և ծառայում՝ իմպերիալիստական սպառազինումների ու պատերազմների պաշտպանության համար:

Սյոդալիսի ագիտացիա մեզ պետք է: Պրոլետարական պետության մեջ արտաքին քաղաքականության դիվանագիտական գաղտնիքներ չկան ու խորհրդային Միության յուրաքանչյուր աշխատավոր վոչ միայն իրավունք ունի, այլ և պարտավոր է իր կառավարության քաղաքականությունն իմանալու: Մեզ խաղաղություն է հարկավոր: Յեւ այդ խաղաղությունը մենք առաջիմ պահպանում ենք մեր տրամադրության տակ գտնված բոլոր հնարավոր միջոցներով: Սակայն մենք գիտենք, վոր դրանով էլ լուծվում պատերազմի ու խաղաղության դժուրը, վոր մեզ, հակառակ մեր բոլոր ցանկությունների՝ կարող են ստիպել կոչելու: Մենք գիտենք նույնպես, վոր խորհրդային Միության և իմպերիալիստական պետությունների միջև անխուսափելի յե վճռական ճակատամարտը: Յեւ մենք սոցիալիստական պաշտպանություն կկառուցենք, մարտիկների կազմեր կպատրաստենք ճակատի ու թիկունքի համար, չքողարկելով այն վնչ տերտերական «մարդասիրության», վոչ մենշևիկական լրբությունը:

Միակ հասարակակարգը, վորը մարդկության պատմության մեջ առաջինը կլինի, վոր վոչ բռնություն կիմանա, վոչ պատերազմ, դա սոցիալիստական հասարակակարգն է: Դասակարգերը վոչնչացնելու, անդասակարգ, սոցիալիստական հասարակության համար տնտեսական բազիս կառուցելու նպատակով աշխատավոր մասսաների մղած ամբողջ պայքարը՝ միևնույն ժամանակ յերկրի վրա իսկական խաղաղություն հաստատելու համար մղված պայքար է: Ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելը բոլոր հիմունքների հիմունքն է այն արտաքին քաղաքականության, վորը խորհրդային Միությունն է տանում Համկոմկուսի (բ) դեկավարությանը: Լենինի նախագուշակության համաձայն՝ իմպերիալիստական նոր պատերազմն անխուսափելի կերպով խորհրդային Միության դեմ կլինի ուղղված: Այդ պատերազմի հարցը պետք է ամենայն պարզությունը, բա-

ցարձակ կերպով դնել խորհրդային Միության աշխատավոր մասսաների և առանձնապես գյուղի գյուղացիական մասսաների առաջ, վորոնք կոչելով իրենց անող տեմպերի դարագլխին, խորհրդային կառավարության քաղաքականությունն ու Ուսովիաքիմի անեկիքներն այժմ ավելի լավ կհասկանան, քան յերբ ևիցե առաջ:

Մենք վոչ միայն պատրաստ պետք է լինենք պատերազմի, այլ և պատրաստ լինենք այնքան, վոր պատերազմի դեպքում հաղթենք: Բայց ի՞նչն է վճռող ժամանակակից պատերազմում: 1914 — 18 թվերի իմպերիալիստական պատերազմի ժամանակ, գերմանական բանակի ռազմական ամենաընդունակ ղեկավարներից մեկը, Ֆելդմարշալ Հինդենբուրգը (Գերմանիայի ներկա պրեզիդենտը) մի յեղրակացություն եր հանել, վոր մեծապես ընդունվել եր ու տարածվել, այդ յեղրակացությունն է —

«Ներկա պատերազմում նա կհաղթի, վորի ջղերն ավելի ամուր են»:

Ֆելդմարշալը չեր սխալվել. գինվորական մասսաների, ամենից առաջ հենց Գերմանիայի գինվորական մասսաների ջղերն այնպես դուրս յեկան, վոր վճռական բուլետյին իրենց սվիդները բուրժուազիայի դեմ դարձրին: Մեր յերկրի բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության հետ արկարող ենք չանհանգստանալ. — նրա ջղերը կդիմանան. ինչպես Չին-Սրենկյան յերկաթուղու վրա ռազմական ճակատման փորձը ցույց տվեց՝ մարտիկների խանդավառությունը պատշաճ բարձրության վրա կլինի: Բայց ժամանակակից պատերազմի համար դա քիչ է: Չղինված, վատ պաշտպանված մարտիկը — մարտիկ էլ զրահապատ տանկի դիմաց: Ամենաքաջ բանակն անգամ մարտունակ չէ, յեթե չի տիրապետում ժամանակակից տեխնիկային: Ամենախնդուստրիալ թիկունքը կարող է քանդվել, ջախջախվել ու վոչնչացվել, յեթե ողտ-քիմիական պաշտպանման բավականաչափ ուժեղ կազմակերպություն չունի: Հետևաբար, մեզ համար ամենակարևորն ու հիմնականն է — ժամանակակից պատերազմի բնույթն իմանալ և համապատասխան ռազմա-տեխնիկական նախապատրաստություն կազմակերպել:

Անխառնաժողովների ռազմական նախապատրաստութեան խնդրի շուրջը մասսայական աշխատանք ծավալելու համար՝ չափազանց կարևոր է հաշվարկել ապագա պատերազմի տեխնիկական հզոր միջոցները:

Միանգամայն պարզ է, վոր բոլոր այդ միջոցներն ուղղված կլինեն վոչ միայն և գուցե վոչ այնքան ճակատի բանակի դեմ, վորքան թիկունքի բանակի ու կենսական կենտրոնների դեմ: Իսկ թիկունքի բանակ կլինի Միութեան բնակչութեան ամբողջ մասսան, վորովհետև ժամանակակից ողազնացութեան հաջողութեանը այբրովանների համար մատչելի յեն դարձնում յերկրի ամենահեռավոր անկյունները: Կարելի յե առանց չափազանցութեան ասել, վոր իմպերիալիստների ջանքերը գլխավորապես ուղղված կլինեն դեպի մեր թիկունքի քայքայումը, վորովհետև թիկունքի «նյարդերը», նրա արտադրական տեխնիկական կարողութեանը, նրա կազմակերպվածութեանն է, վոր ժամանակակից պատերազմի գլխավոր բաղիսն է կազմում:

Ապագա պատերազմի այդպիսի բնույթից յեղնելով, խորհրդային Միութեան պաշտպանութեան համար հիմնականում կարելի յե նախապատրաստական հետեյալ 3 տարրերը նշել.

1) ռազմական տեխնիկայի ուժեղացում և ամրապնդում: Այս խնդիրը կատարվում է խորհրդային Միութեան ամբողջ ժողովրդական տնտեսութեան պլանի հետ միասին: Խնդուստրիայի ու հանրայնացրած խոշոր գյուղատնտեսութեան մեր հսկաները ստեղծում են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ անհրաժեշտ ռազմատեխնիկական միջոցներ արտադրելու համար:

2) ռազմական ուժի վարժված ուժեղացումը ու կազմակերպչական նախապատրաստում: Այս խնդիրն իրագործում են ռազմական տեսչութեան որդաններն ու Ոստավախաքիմի կազմակերպութեանը.

3) թիկունքի կազմակերպում և քաղաքացիական բնակչութեան ռազմական նախապատրաստութեան: Այս խնդիրը նշանավոր չափով իրականացնում է Ոստավաքիմը, իրեն հասարակական մասսայական կազմակերպութեան:

Այդ խնդիրների շնորհիվ Ոստավաքիմի գյուղում ունեցած սովխոզային ու կոլխոզային կազմակերպութեանների վրա ահազին ու խիստ պատասխանատու դեր է դրվում: Նրանք վոչ միայն պետք է պատերազմի ու խորհրդային Միութեան պաշտպանութեան հարցերում լայն մասնակցություն ցուցաբերեն, այլ և խաղաղ տնտեսական շինարարութեան պրակտիկական կապեն բանակի համար կադրեր պատրաստելու, պաշտպանութեան կազմակերպելու ու աշխատավորների մասսայական ռազմական նախապատրաստութեան խնդիրների հետ:

Ինչպես վերև մատնանշվեց, գյուղատնտեսական արտադրութեան ասպարեզը խորհրդային Միութեան պաշտպանութեանը կառուցելու շատ հարուստ հնարավորութեաններ են երկայացնում: Բայց այդ աշխատանքի մեջ հաջողութեան գլխավոր պայմանն է — աշխատանքով ընդգրկել վոչ միայն սովխոզները բանվորներին ու կոլխոզնիկներին, այլ և շրջակա գյուղացիական բնակչութեանը: Յուրաքանչյուր սովխոզ ու կոլխոզ պետք է պաշտպանութեան իր պլանները, իր հասարակական Ոստավաքիմիական հնգամյակն ունենա, վորը պետք է իրագործվի վոչ պակաս խանդավառութեամբ, քան տնտեսական ու կուլտուրական շինարարութեան հնգամյակը: Դա լիովին համապատասխանում է սոցիալիստական պետութեան ամբողջ հասարակակարգին ու իմպերիալիստների հարձակման դեմ նրա պաշտպանութեան բնույթին:

ՈՍՏԱՎԻԱՔԻՄԻ ՋՈՂԱՏՆԵՐԸ — ԲԵՐՔԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Ոստավաքիմն արդեն կարողացել է իրան գյուղում ցույց տալ ամենալավ կողմից — ավելի բարձր բերքի համար տարվող պայքարում արտադրական ոգնութեան հասցնելու գծով: Հաղիվ թե լինի մի ուրիշ հասարակական կազմակերպութեան, վոր գյուղատնտեսական արտադրութեան մեջ այնքան ոգտակար ու անհրաժեշտ լինի, վորքան Ոստավաքիմը: Բերքատվութեանը բարձրացնելու բոլոր ագրոտեխնիկական միջոցառումները գնում են չորս գծով — հողաշինարարութեան, սերմեղենի տեսակավորում, հողի մշակման

մեքենայացում ու քիմիացում (սերմի ախտահանություն, քիմիական պարարտացում) ու պայքար վնասատուների դեմ: Վերջին յերկու ուղղությամբ Ոստավիաքիմը մեծ գործ է տանում, ըստ վորում ընկերությունը քիմիացման գործում գլխավոր դերն է խաղում: Բայց հենց այդ ուղղությամբ տարվող աշխատանքը բերքատվությունը բարձրացնելու համար վճռական նշանակություն ունի:

Թե պարարտացման քիմիացումն ինչ նպիւով և գյուղական տնտեսության արտադրության բարձրացման միջոց ծառայում, դրան պերճախոս ապացույց Գերմանիայի, Հոլլանդիայի և այդ կողմից առաջավոր՝ մյուս յերկրների փորձը: Նախկին Ռուսաստանը հարյուրավոր տարիներ միևնույն մակարդակի վրա յեր կանգնած՝ մի հեկտար ցանքսից միջին թվով 6—7 ցենտներ հացահատիկ ստանալով: Իսկ Գերմանիան դեռ 1913 թվին, քիմիական պարարտացումների հետեանքով՝ մի հեկտարից ստացվող ցորենի բերքը հասցրել էր 24 ցենտների, իսկ Հոլլանդիան 1925 թվին մի հեկտարից ստացել է 28 ու կես ցենտներ: Գերմանական մասնագետները հաստատում են, վոր պատերազմից առաջ վերջին 50 տարիների ընթացքում բերքատվության բարձրանալը 50% - ով պարտական է հանքային պարարտացումներին, 25% - ով — հողի մշակումը բարելավելուն (մեքենայացում), 15% - ով — բարելաված սերմ ցանելուն և 10% - ով — ցանքսափոխության բարելավելուն (ռացիոնալ հողաշինարարություն):

Քիմիական պարարտացումների կիրառման փորձը Խորհրդային Միության մեջ պակաս համոզեցուցիչ արդյունք չի տալիս: Ոկա գետի վրա Գնիլիցի գյուղի մոտի «Մաշինոյե տովարիչեստվո» կոլխոզում առանց պարարտացման մի հեկտարը տալիս է 9.630 կիլոգրամ, իսկ լիովին պարարտացումով (սուլֆատ-ամոնիում, սուպերֆոսֆատ, կալիոն աղ) — 19.530 կիլոգրամ, այսինքն՝ բերքը բարձրացել է ավելի քան յերկու անգամ: Նույնը և առվույտի վերաբերմամբ. — առանց պարարտացման՝ 2987 կիլոգրամ մի հեկտարից, սուպերֆոսֆատով ու կալիոն աղով պարարտացնելով՝ 6.115 կիլոգրամ: Մոսկվա — Նիժնեգորոդ, յերկաթուղու Ռաստյապինո կայարանի մոտ Նազուլինի կոլխոզում առանց պարարտացման մի հեկ-

տարից ստացվել է 1.280 կիլոգրամ վարսակ, իսկ լիովին պարարտացնելով՝ 3.024 կիլոգրամ: Առվույտ առանց պարարտացման — 2.570 կիլոգ., պարարտացնելով՝ 5.663 կիլոգրամ:

Այս որինականներից պարզ է, վոր գյուղատնտեսության քիմիացումը՝ բերքատվությունը բարձրացնելու մի գորեղ միջոց է:

Այստեղ, արտադրական խնդիրների ու Խորհրդային Միության պաշտպանության խնդիրների հենց այդ իրար կցման, դեզադիպման հիմունքներով հնարավոր և սովխոզների բանվորների ու կոլխոզնիկների ամենալայն մասսաների մեծագույն ինքնագործնելությունը դարգացնել:

Այժմ վերցնենք մեքենայացումը: 1930 թվին սովխոզների, կոլխոզների ու մեքենատրակտորային կայանների դաշտերում 100.000 տրակտորից պակաս չի յեղել: Հենց միայն այդ մեքենայական պարկը իր սպասարկման համար հարյուր հազարավոր տեխնիկապես վարժված բանվորներ և պահանջում: Գյուղատնտեսության մոտորացման աճման հետ միասին՝ հնգամյակի վերջին մոտ մի միլիոն միմիայն տրակտորիստ կպահանջվի: Համապատասխան դպրոցների, դասընթացների, ուսումնա-մեքենայական արհեստանոցների միջոցով այդ կադերն ստեղծելու գործում՝ Ոստավիաքիմի սովխոզային ու կոլխոզային կազմակերպությունները պետք է ամենաակտիվ մասնակցությունն ունենան: Նրանք պարտավոր են այդ բանն անելու հենց միայն նրա համար, վոր նրանց վրա յե ընկած այդպիսի տեխնիկական կադեր պատրաստելու գործը ոգաքնացություն, ավտո-մեքենաների, տանկերի, ծովային ռազմանավերի ու Կարմիր բանակի մյուս տեխնիկական միջոցների համար: Նրանք պետք է այդ ուսման համար մոբիլիզացիայի յենթարկեն յերեսասարդ բանվորների ու գյուղացիների մասսաները:

Սովխոզների և կոլխոզների Ոստավիաքիմի կազմակերպությունների աշխատանքների համար ավելի մեծ ասպարեզ կա գյուղական տնտեսության քիմիականացման բնագավառում: Տնտեսական գործնական աշխատանքը պահանջում է, վոր մարդ կարողանա ոգտվել թույններից սերմերն ախտահանելիս, դաշտերի և ամբարների վնասատուների դեմ

կապելիս. վորոշ գիտելիքներ են պահանջվում պարարտացման համար դանազան քիմիական աղբը գործածելու բնագավառում, գյուղատնտեսական աղբերից և մնացորդներից քիմիական նյութեր մշակելու համար փորձնական լաբորատորիաներ կազմակերպելու գործում և այլն: Կարիք է կա ապացուցելու, վոր այդ աշխատանքը չափազանց հեշտ է գուգակցել Խորհրդային Միության քիմիական պաշտպանություն համար բազաներ կազմակերպելու աշխատանքի հետ: Իհարկե, դա էի նշանակում, թե ընդհանուր առմամբ խնդիրը հեշտ լուծելի չէ: Քիմիականացման գործում դեռևս այնքան քիչ բան է արված և դեռ այնքան շատ բան կա անելու, վոր Ոստավիաքիմի ընկերության կազմակերպությունները պետք է մեծ ջանք գործ դնեն այդ գործը համապատասխան կերպով կազմակերպելու համար, իսկ վոր գլխավորն է, — գյուղացիական բնակչության քիմիական անգրագիտությունը վերացնելու համար: Այստեղ մենք միայն շեշտում ենք, վոր քիմիականացման բնագավառը ավելի բարենպաստ հող է ներկայացնում գյուղում Ոստավիաքիմի մասսայական աշխատանքը զարգացնելու համար և վոր այնտեղ տնտեսական ու ռազմականացման խնդիրները ամենալավ կերպով կա-
րելի չեն գուգակցել:

Ոստավիաքիմի ջոկատները գյուղում՝ ամենից առաջ սով-
խողներում, կոլխոզներում և մեքենատրակտորային կայան-
ներում, պետք է բերքի համար մղվող պայքարի ավանդա-
րում լինեն: Ինչպես ցույց է տվել 1929 թվի ցանքսային
կամպանիաների և 1930 թվի գարնանացանի կամպանիայի
փորձը, Ոստավիաքիմի կազմակերպությունները այդ պայ-
քարում կարող են և պետք է տանեն իրենց յետևից գյու-
ղացիական բնակչության ամենալայն մասսաները: Բայց
դրա հետ միասին նրանք վոչ մի ընդհանուր չափանիս
իրենց ուղղակի և անմիջական խնդիրներն այդ աշխատան-
քում. նրանք գյուղատնտեսական արտադրության մոտորաց-
ման և քիմիականացման բնագավառում յեղած ամեն մի
միջոցառում պետք է ոգտագործեն Խորհրդային Միության
պաշտպանության շահերի համար: Հենց դրանով նրանք մի
ուժեղ միջոց կգտնեն ոգտագործելու սովխոզի բանվորների

ու կոլխոզնիկների աշխատանքային վերելքը և ավելի հաս-
տատուն կերպով գուգակցելու տնտեսական ֆրոնտի աշխա-
տանքները Խորհրդային Միության պաշտպանությունն ամ-
բապնդելու աշխատանքների հետ:

ԿՈՍՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ 100%-ՈՎ — ՈՍՏԱՎԻԱՔԻՄԻ ՇԱՐՔԵՐԸ

Կոմյերիտմիությունը, վորը գնում է սոցիալիստական շի-
նարարության ավանդարդում, հազարն ծառայություններ է
արել կուսակցությանը և բանվոր դասակարգին: Կոմյերիտ-
միությունը սոցիալիստական մրցության նախաձեռնողն է
յեղել, նա առաջ է բերել հարվածային շաբժումը, վորը դար-
ձել է ամբողջ պրոլետարիատի գործը. նրան են պատկա-
նում ամենահամարձակ և վճռական յեղույթները մեր տնտե-
սական և կուլտուրական շինարարության համարյա բոլոր
բնագավառներում:

Դրա համար ել շատ տարրինակ է թվում կոմյերիտ-
միության անթույլատրելի յետաձգությունը ռազմական
բնագավառում, մասնավորապես, Ոստավիաքիմի աշխատան-
քում: Համլենկոմյերիտմիության Կենտկոմը շատ վորոշում-
ներ ունի միության անդամների պարտադիր ռազմական
ուսուցման և կոմյերիտականների 100%-ով Ոստավիաքիմի
շարքերը մտնելու մասին: Սակայն, այդ վորոշումները դեռևս
թույլ և անբավարար են կատարվում: Ոստավիաքիմում կոմ-
յերիտմիությունը դեռևս էի կարողացել այն դրությունը գրա-
վել, վորը պետք է ունենար, իբրև Ընկերության հիմնական,
կազմակերպող կորիզներից մեկը, մանավանդ գյուղում, Համ-
լենկոմյերիտմիության նոյեմբերյան պլենումը (1929 թ.)
Միության ռազմական խնդիրների վերաբերմամբ կոմյերիտ-
միության մեջ ստեղծված դրությունը գնահատել է այսպես՝
«Մոռացության են տրվում սոցիալիստական շինարարու-
թյան պաշտպանության համար նախապատրաստվելու ուղ-
ղակի պարտականությունները, վոր սահմանակցվում է գործ-
նականում ոպրտունիզմի հետ»:

Ոստավիաքիմի աշխատանքներին կոմյերիտմիութեան միանգամայն անբավարար մասնակցութեան գլխավոր պատճառներէց մեկն, անշուշտ, կոմյերիտական կազմակերպութեաններ կողմից պատերազմի վտանգի և այստեղից բոլորող ռազմական պատրաստութեան խնդիրներէ թերագնահատութեանն է: Որվա հոգսերով զբաղված, տնտեսական ֆրոնտի պայքարով տարված, ել ինչպես մտածել ապագա պատերազմի մասին... Յեւ հաճախ չեն ել մտածում ու ավելի հաճախ ել վոչինչ չեն անում ռազմական պատրաստութեան համար:

«Պետք և ուղղակի ասել, — գրում է Վյաչմայի «Տոփաբիշ» թերթը 1930 թվի ապրիլի 15-ի համարում, — վոր մեր կազմակերպութեանները մինչև այժմ ել թերագնահատում են Ոստավիաքիմի դերը, Պրոֆմիութեանները և, մանավանդ, կոմյերիտմիութեանը համարյա չեն մասնակցում Ոստավիաքիմի աշխատանքին»:

Դժբախտաբար, այդպիսի տեղեկութեանները շատ շատ են: Մանկավարժական թերթում, վոր հաճախ տեղի յե ունենում կոմյերիտական կազմակերպութեաններ մեջ, զուգահեռականութեանը և անջատականութեանն է, այսինքն կոմյերիտական ռազմական աշխատանքն Ոստավիաքիմից բաժանելն է: Յեւ այդ անջատականութեանը հաճախ քողարկում է կոմյերիտական կազմակերպութեաններ լիակատար անգործնեցութեանը՝ ռազմական պատրաստութեան գործում: Ահա բնորոշ մի դեպք, վոր տեղի յե ունեցել Ռյազանի շրջանի Շիլովսկիյ ռազմական ժելուզովո գյուղում: Այնտեղ կա Ոստավիաքիմի վոչ վատ մի բջիջ: Այդ բջիջն ունի 126 անդամ, վորից 56-ը — գեղջիկներ, Բայց բջիջի աշխատանքների ծավալմանը տեղական կոմյերիտական կազմակերպութեանը վոչ միայն չի աջակցում, այլև ուղղակի խանգարում է:

«Մենք ցանկանում եյինք, — գրում է «Րաբոչիյ Կլիշ» թերթի թղթակիցը, — ներկայացում տալ մեր միջոցներն ուժեղացնելու համար: Կոմյերիտական Ռիբկինը ուղղակի հայտարարում է՝ «Մենք խմբավորումներ թույլ չենք տա»: Ահա մի ուրիշ տեղեկութեան «Կոլտմենսկիյ րաբոչիյ» թերթից:

«Կիզանտ սովխոզում (Կեդիկովո գյուղ) Ոստավիաքիմի աշխատանքը թույլ է գնում: Բջի գործնեցութեանն աշխուժացնելու համար վճոված եր վերընտրել բյուրոն: Սակայն այդ բանը կենսագործել չի հաջողվում, վորովհետև կոմյերիտբջիջը դրան հարկավոր ուշագրութեանը չի դարձրել»:

Ել դրանից դենը գնալու տեղ չկա: Յեթե բյուրոն վերընտրելն անհնար է դառնում կոմյերիտականների պատրիվութեան շնորհիվ, ել ինչ է ընդունակ անելու այդպիսի բջիջը: Զմոռանանք, վոր խոսքը խոշորագույն սովխոզի կազմակերպութեան մասին է, ուր կան հազարավոր գյուղատնտեսական բանվորներ, շրջապատում ել մեծ գյուղացիական մասսա կա: Սակայն, կան նաև ուրիշ, կոմյերիտմիութեանից անկախ պատճառներ:

«1928 թվին Համլենկոմյերիտմիութեան Լիկինի բջիջը ռազմականացման առաջին շարքերում է յեղել: Բայց... ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոխվում է: Այժմ արդեն 1930 թիջն է, բայց մեղում ռազմականացման գործը շատ վատ է: 200 կոմյերիտականներից ռազմական զբաղմունքներին հաճախում է 40% -ը, անկուսակցականներից — վոչ վոր: Զբաղմունքները տեղի յեն ունենում փակ շենքում: Մարտական տազնապներ չեն յեղել: Ռազմական արշաջներ — նույնպես չեն յեղել: Ռազմականացման մասին շատ անգամ հարց է դրվել Համլենկոմյերիտմիութեան բջի բյուրոյում և ընդհանուր ժողովներում, բայց վոչ մի արդյունք չկա»:

Այստեղ արդեն յերևան են գալիս հենց իրա — Ոստավիաքիմի ռազմական աշխատանքի կազմակերպման թերութեանները: Բանը նրանումն է, վոր Ոստավիաքիմի ռազմական նախապատրաստման ձևերի ու միջև իսկ ծրագրերի և յերիտադրութեան սլահանջների միջև մեծ անհամապատասխանութեան կա: Այդ ձևերը, սովորաբար, խմբակային գրուցյներից և շարքային վարժութեաններից դենը չեն գնում, վորոնք արագորեն ձանձրացնում են յերիտասարդներին և զբաղվելու տրամադրութեանը մեղցնում: մեկ ել այն պատճառով, վոր նրանց շուրջը մասսայական աշխատանք չի տարվում:

Չափադանց չոր և վերացական ե գրվում այդ ռազմական աշխատանքը: Այնինչ, ցանկութեան դեպքում՝ դժվար չե գտնել և գործադրել ռազմական նախապատրաստման մի շարք նոր, կենդանի և գրավիչ մասսայական ձևեր, վոր հետաքրքիր լինեն յերիտասարդութեան համար և միանգամայն անհրաժեշտ ռազմական գործին:

Որինակի համար վերցնենք տուրիզմը: Ամեն տեսակի գործերի համար մեզ հարկավոր ե ճարպիկ, վարժ դիտելու ընդունակ, ամեն պայմաններում կողմնորոշվել կարողացող մարտիկ, զարգացած մկանունքով, առողջ ներկերով և սրտով մարտիկ: Բայց... ահա թե ինչ ե գրել այդ առթիվ Յե. Չերնյակը «Ոստավիաքիմ» ժուրնալում:

«Մեր տուրիստը բնութեան գեղեցկութեաններով հիանում ե վագոնի լուսամուտներից, կամ, լավագույն դեպքում խիզախում ե 30—40 կիլոմետր անցնել Ռազմավիրական ճանապարհով կամ Ղրիմի ափերով:

«Բոլորովին այլ կերպ ե դրված գործը գերմանացիների մոտ: Վոչ թե տրուսիկով և ժարգակողիկներով ե գնում գերմանական տուրիստը, այլ բեռնավորված իրերի պարկով, վրանով, պլանշետով, քարտեզով, կողմնացույցով, հեռադիտակով, ձնաքողերով ե բնութեան դեմ կովի դուրս գալիս՝ նրա դաժան տեղերում»:

Կապիտալիստական յերկրներում լավ են հասկանում ռազմականացված սպորտի և տուրիզմի նշանակութեանը: Կազմակերպված ֆիզկուլտուրնիկների թիվը, որինակ Գերմանիայում, հասնում ե 7 միլիոնի, նույնքան ել Իտալիայում, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում — 5 միլիոն, Ֆրանսիայում — 4 միլիոն, իսկ մեզում — խորհրդային Միութեան մեջ — միայն 1 միլիոն: Այնտեղ սպորտի և տուրիզմի շուրջը յերիտասարդութեան լայն շարժում ե ստեղծված՝ ռազմական նպատակներով: Մեր Ոստավիաքիմի կազմակերպութեանները համարյա չեն կարողանում ռզտագործել ռազմական նախապատրաստման այդ ամենահետաքրքրական ձևերը՝ կոմյերիտներին, նրանց հետ միասին ել միլիոնավոր անկուսակցական յերիտասարդ բանվորներին ու գյուղացիներին գրավելու նպատակով:

Հնարավոր ե, վոր յեռանդուն, հրապուրվող յերիտասարդութեանը կարողանա անմասն մնալ ռազմականացված աշխատանքի այնպիսի տեսակներին, վորպիսին են ռազմա-ֆիզկուլտուրային արշավներն ու զբոսանքները, ռազմատուրիստական յելույթները, լագերները, տանգապները, հավաքները, ռազմա-ֆիզկուլտուրային խաղերը և մրցութեանները, կոմյերիտական ռազմական հավաքները և այլն: Վոչ, հնարավոր չե: Հենց այդ ուղիներով ե, վոր պետք ե զարգացվի յերիտասարդներին մասսայորեն Ոստավիաքիմի շարքերը գրավելու աշխատանքը: Այդ ձևերն, իհարկե, վոչ մի դեպքում չպետք ե փոխարինեն զինվորական նախապատրաստութեան հիմնական ձևերին, վորպիսին են Ոստավիաքիմի վարժական-հրաձգային միավորները: Սակայն դրանք այս վերջինների հետաքրքրական լրացումն են կազմում, իսկ վոր պլանավորն ե՝ դրանք միակ վստահելի մեթոդն են յերիտասարդների մեջ լայն մասսայական աշխատանք տանելու համար:

Կոմյերիտիստութեանն ե, վոր նախաձեռնողը և իրականացնողը պիտի հանդիսանա Ոստավիաքիմի ընկերութեան աշխատանքի վերակառուցմանը՝ նոր հիմքերով, նոր տեմպերով, աշխատանքի նոր ձևերով: Այդ բոլորի անհրաժեշտութեանը թելադրվում ե Ոստավիաքիմի զարգացման և խորհրդային Միութեան սոցիալիստական պաշտպանութեան տանյակ միլիոնանոց մարտիկների մասսայական կազմակերպութեան դառնալու ամբողջ ընթացքով: Պետք ե, վոր Ոստավիաքիմի վեցմիլիոնանոց մասսայի մեջ յեռա յերկու միլիոն կոմյերիտականների յերիտասարդ արյունը: Այն ժամանակ կոմյերիտականներին 100%-ով Ոստավիաքիմի շարքերը գրավելու խնդիրը կդառնա հեշտ և արագ իրագործելի:

ԿԻՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ոստավիաքիմի շարքերում կան 1.200.000 կին կամ ընկերութեան ամբողջ կազմի 20%-ը: Վորքան ել մեծ լինի այդ թիվը, դա այնուամենայնիվ չի համապատասխանում այն բավականաչափ պատասխանատու դերին, վորն ունի կինը խորհրդային Միութեան պաշտպանութեան գործում:

Խորհրդային Միության դեմ լինելիք իմպերիալիստական պետությունների ապագա պատերազմում բանվորունին և գեղջկունին աղամարդու հետ ձեռք ձեռքի տված պետք է պաշտպանության ռազմական աշխատանք տանի՝ նրա բոլոր հյուղերում:

Կանանց վերաբերմամբ յեղած դարավոր նախապաշարունակները դեռևս ուժեղ են մեզում: Դրանք մեծ արգելք են կանանց լայն մասսաներին Ոստավիաքիմի շարքերը գրավելու գործում: Սակայն, Ոստավիաքիմի գործնեյությունը պերճորեն համոզում է մեզ, վոր մինչև իսկ ռազմա-շարքային գործում կինը ժամանակի ընթացքում կարող է կանգնել աղամարդու կողքին: Այդ ակնբախ կերպով ապացուցում են այնպիսի առաջնակարգ հրաձիգները, ինչպիսիք են Ալեքսանդրովան, Խիցկին, Նեզլյադը, Դանիլովան, Գորդանովան և ուրիշները, վորոնք շեշտակի նշան խփելու մեջ յետ չեն մնում աղամարդկանցից: Այդ մասին վկայում են Կարմիր բանակի անցյալ տարվա զորախաղերը և Ոստավիաքիմի կանանց բատալիոնների մասնակցությունը, Դրան հիանալի որինակ են տվել անցյալ տարի Նովոսիբիրսկի 125 ոստավիաքիմիական կանայք (բանվորունիներ և գեղջկունի-կուլային ռազմական դասընթացները՝ դաշտում, բաց յերկնքի տակ: Այդ փորձի հիման վրա 1930 թվի ամառը Միության մեջ կազմակերպվել են 10 լազեր կանանց համար): Վերջապես, թվում է, վոր վերջին ժամանակներս վերջ է տրվել և այն նախապաշարունակին, թե «կանանց որդանիզմի հոգե-ֆիզիկական առանձնահատկությունները նրանց թույլ չեն տալիս ռաշվական ծառայություն տանել» ավիացիայի մեջ: Որաշվական դպրոցներում ընդունելություն է բացված կանանց համար: Կնոջ դրական դերը բանակի ոժանդակ սպասարկման գործում (սանիտարական, կապի և այլն) վաղուց է ապացուցված:

Կինը պետք է սովորի տիրապետել հրացանին և վարվել զնդացրի հետ: Բայց կնոջ գլխավոր դերը կայանում է թի-րազմում կինը արդյունաբերական ձեռնարկներում, սովորո-

նեում և կոլխոզներում պետք է փոխարինի աղամարդուն ու նրան ազատի ճակատի մարտական աշխատանքի համար: Բայց վերը մենք նշել ենք, վոր ժամանակակից պատերազմը ճակատի և թիկունքի սահմանները ջնջում է: Հետևաբար, աշխատավոր կանանց մասսաները պետք է պատրաստված լինեն ամենից առաջ որպես իմական պաշտպանության գործը կատարելու համար:

Ահա թե ինչու Ոստավիաքիմի 2-րդ համաթիությունական համագումարը խնդիր է դրել՝ 5-ամյակի վերջին ընկերության մեջ կանանց թիվը հասցնել 5,5 միլիոնի (կազմակերպության ամբողջ կազմի 32%-ը): Ահա թե ինչու, դրա հետ միասին համագումարը վորոշել է լուծարել յենթարկել Ոստավիաքիմի կազմակերպությունների կին-սեկցիաները, ընդունելով, վոր կանանց մեջ տարվող աշխատանքը չի կարող մնալ միայն իբրև կին-սեկցիաների գործ, այլ պետք է դառնա ընկերության բոլոր սեկցիաների և ղեկավար որդանների աշխատանքի որդանական, բազադրիչ մասը:

Դրա համար ել՝ կանանց Ոստավիաքիմի շարքերում կազմակերպելու գործում պատասխանատու խնդիրներ են դրվում, մանավանդ, սովխոզներում, կոլխոզներում և մեքենատրակտորային կայաններում: Ոստավիաքիմի անդամ գեղջկունիների տոկոսը շատ փոքր է: Գյուղում նախապաշարունակները, անկուլտուրականությունը, գյուղատնտեսական անդրագիտությունը հաճախ այն հետևանքն են տալիս, վոր դասակարգային թշնամին ոգտագործում է գեղջկունիների յետամնաց մասսաներին: Որինակ, մի շարք դեպքեր են յեղել, յերբ գեղջկունիներն ուղղակի հակառակ են գնացել գյուղատնտեսության քիմիականացման միջոցառումներին:

Գեղջկունիներին հասարակական ակտիվացման գլխավոր պայմանը նրանց կազմակերպվածությունն է: Կյանքում մենք հաճախ տեսնում ենք, թե ինչպես կազմակերպված հաճախ տեսնում ենք, թե ինչպես կազմակերպված են կոլեկ-բատրակունիներն ու չքավորունիները դառնում են կոլեկ-բատրակունիներն աշխատանքներ, ավելի տաք ագիտատորներ տիվացման նախաձեռնողներ, ավելի տաք ագիտատորներ արտադրության և կենցաղի սոցիալիստական վերակառուցման: Իսկ յեթե բացակայում է կազմակերպվածությունը, ման, Իսկ յեթե բացակայում է կազմակերպվածությունը, ընդհակառակը, գեղջկունիները հաճախ ընկնում են կուլակ-

ների ազդեցութեան տակ, Կանանց մասսայորեն գործի քաշելու նպատակով, սովխողները և կոլխողները Ոստավիաքիմի կազմակերպութեանները պետք է լայնորեն ոգտագործեն գյուղում գոյութուն ունեցող կինկազմակերպութեանները: Մենք այժմ ունենք 300 հազարից ավելի կին միայն գյուղ-խորհուրդների անդամ և մի քանի անգամ ել ավելի կանայք, վորոնք կազմակերպված են այդ խորհրդային ակտիվի շուրջը: Ոստավիաքիմի կազմակերպութեանները առաջին հերթին պետք է հենվեն գյուղի աշխատավորուհիների այդ առաջավոր և առաջնորդող մասի վրա,—կանանց պատգամավորուհիների ժողովների վրա:

Սովխողների բանվորուհիներին, կոլանտեսուհիներին և մենատնտես գեղջկուհիներին բատրակա-չքավորական մասսաներին Ոստավիաքիմի շարքերը գրավելու հիմնական միջոցն է լայն բացատրական, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը: Սկսելով այդ աշխատանքի տարրական ձևերից՝ գյուղատնտեսութեան բարձրացման և քիմիայի կենցաղում ունեցած դերի մասին զրույցներից,—դժվար չէ անցնել գյուղատնտեսական խմբակների կազմակերպմանը, իսկ այստեղից ել—հանքային պարարտանյութերը գործադրել սովորեցնելուն (առաջին հերթին ոժանդակ նյութերը, մոխիրը, աղբը, կիրը և այլն), տրակտոր, կոմբայն կառավարելը սովորեցնելուն և այլն: Դժվար չէ այդ բոլոր աշխատանքներն աստիճանաբար շաղախել ռազմական պրոպագանդով և, առաջ գնալով, կանանց գրավել ռազմական գիտելիքների, հրաձգութեան խմբակները և այլն:

Միայն այն ժամանակ, յերբ Խորհրդային Միութեան պաշտպանունակութեանն ամրապնդելու հարցերի վերաբերմամբ լայն բացատրական աշխատանքը կապակցվի գյուղատնտեսութեան սոց. վերակառուցման ստեղծագործական աշխատանքի հետ, — գեղջկուհիների մասսաներում գիտակցական վերաբերմունքը կաճի դեպի Ոստավիաքիմի խնդիրները: Միայն այդ գիտակցականութեան հիման վրա՝ մենք գյուղի աշխատավորուհիների մոտ, յետաձեռաց մասսաները կդարձնենք Խորհրդային Միութեան սոցիալիստական շինարարութեան և պաշտպանութեան ակտիվ մարտիկների միլիոնավոր կազմեր:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՓՆ ԱՄՐԱ-ՊԵՆԵԼԸ — ԱՄԵՆ ՄԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-ԹՅՈՒՆՆ Ե

Խորհրդային Միութեան պաշտպանութեանն ամրապնդել — դա նշանակում է, ամենից առաջ, հոգալ Կարմիր բանակի մարտական ուժի ամրապնդման մասին, նրա մարդկային կազմերի և ինդուստրիալ-տեխնիկական բազայի մասին: Կարող ե խորհրդային Միութեան թեկուզ մի աշխատավորը, վորն անկեղծորեն ցանկանում է սոցիալիստական հասարակութեան կառուցման նպատակների իրագործումը, մնալ անմասն այդ աշխատանքում: Վոչ և վոչ: Բայց խորհրդային հասարակայնութեանն ռազմական գործերի վերաբերմամբ ուրիշ ներկայացուցիչ չունի, բացի Ոստավիաքիմից: Հետևաբար, նախ, Ոստավիաքիմը Խորհրդային Միութեան աշխատավորների ամբողջ մասսայի կազմակերպութեանն է, անկախ նրանից, թե վորևս մեկը ձևականորեն ընկերութեան անդամ է կամ վոչ: Հետևաբար, յերկրորդ, Ոստավիաքիմի կազմակերպութեանները վոչ մի դեպքում չեն կարող պարփակվել ընկերութեան ներքին գործնեյութեան շրջանակներում, այլ պետք է իրենց ազդեցութեանը տարածեն աշխատավորների ամբողջ մասսայի վրա և այդ ամբողջ մասսային՝ հասարակական ներգործութեան այս կամ այն ձևերով գրավեն սոցիալիստական պաշտպանութեան շինարարութեան գործին:

Ոստավիաքիմի այդպիսի դրութեանից բղխում են ահագին գործնական անելիքներ նրա բոլոր կազմակերպութեանների համար: Այդ անելիքներին նյութվումը կայանում է նրանում, վոր վոչ միայն ընկերութեան անդամ յեղող վորոշ կազմերը, այլև ամբողջ յերկիրը տեղյակ լինի իմպերիալիստների կողմից Խորհրդային Միութեան դեմ սպառնացող հարձակման դեպքերին, վորպեսզի վոչ միայն պատերազմի վտանգի սրման մոմենտում, այլև ամեն ուր մասսաները բարոյապես-քաղաքականապես և արտադրականորեն-տեխնիկորեն պատրաստ լինեն ամեն մի մոմենտում ընդդիմադրելու հարձակմանը:

Եւ ավելի պատասխանատու կերպով և զբւոյժ այդ խնդիրը՝ ընկերութեան գլուղական կազմակերպութիւններէ վերաբերմամբ: Խորհրդային հասարակայնութիւնը քաղաքներում և արդուրաբերական կենտրոններում սովորաբար արագորեն և ջերմորեն արձագանքում ե իմպերիալիստներէ կողմից Խորհրդային Միութեան դեմ արվող բոլոր լուրջ յետապնդումներն՝ ժողովներով և բողոքի ցույցերով: Քաղաքն ինտենսիվ քաղաքական կյանք ե ապրում ե այստեղ Ոստավիաքիմի խնդիրներն այդ տեսակետից ավելի թեթեւ են վճռվում: Ուսանողներէ տասնյակ տորմիդները և տանկերի ջոկատները, վոր կառուցված են աշխատավոր մասսաների միջոցներով, ուղղակի պատասխան են իմպերիալիստներէ վտանգութեաններին և արդունք պրոլետարական մասսաների տարերային շարժման:

Գլուղը բավական հեռու յե այդ շարժմանն այդ չափով մասնակցելուց: Այստեղ, շնորհիւ բավականաչափ լրիւ ինֆորմացիայի բացակայութեան, Ոստավիաքիմի կազմակերպութիւններէ թուլութեան, կուլակային ագիտացիայի և այլն և այլն, շատ հաճախ միջազգային լուրջ դեպքերի պայմաններում խուճապային տրամադրութեաններ են տարածվում կամ, լավագույն դեպքում, կրավորական-անտարբեր վերաբերմունք ե ստեղծվում դեպի պաշտպանութեան գործը:

Հարկավոր ե բեկում առաջ բերել: Բեկում առաջացնել կարելի յե և պետք ե ամենից առաջ գլուղական տնտեսութեան հանրայնացրած սեկտորի ամբողջ գծով: Ամենապարզ կոպերատիւ միավորումներից սկսած մինչե կոմունաներն ու սովխոզները — ամեն տեղ, ուր իրավասութեան ե ձեռք բերում արդունքներութեան հանրայնացումը և կոլեկում ե գլուղացիական մասսաների նոր հոգեբանութեանը, պետք ե լայն ագիտացիա ու պրոպագանդա ծավալի պատերազմի վտանգի և Խորհրդային Միութեան պաշտպանունակութեան ամրապնդելու հարցերի շուրջը: Այդ ագիտացիան պետք ե արմատավորել բոլոր մասսայական կազմակերպութիւններին — կուսակցական, կոմյերիտիստական, պրոֆմիութենական, հասարակական կազմակերպութիւններին աշխատանքի մեջ, և բոլոր ժողովներում համառորեն դնել

պաշտպանութեան գործում քաղաքացիական պարտքի կատարման հարցերը:

«Ամրապնդել Խորհրդային Միութեան մարտական ուժը — Խորհրդային Միութեան ամեն մի աշխատավորի պարտականութեանն ե.» — այս լողունգով անհրաժեշտ ե վարակել գլուղատնտեսական պրոլետարիատի և կոլխոզնիկների ամբողջ մասսան, իսկ նրանց յետեից ել գլուղացիական բնակչութեան աշխատավորների մնացած մասսան: Այդ լողունգի լավագույն գործնական արտահայտութիւնները կլինեն սովխոզների, կոլխոզների և մեքենա-տրակտորային կայանների անվան ողանավորի նոր տորմիդները և տանկերի բրիգադները:

III. ԱԳԻՏՊՐՈՊԱՇԻԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԶԵՎԵՐԸ ՅԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԱԳԻՏԱՑԻԱՆ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ — ԱՌԱՋԻՆ ՊԼԱՆՈՒՄ

Սովխոզներում, կոլխոզներում և մեքենա-տրակտորային կայաններում Ոստավիաքիմի ագիտպրոպագիտանքի խնդիրներն ու բովանդակութեանն, ինչպես տեսանք, բավականին բարդ և պատասխանատու յեն: Այդ խնդիրների իրականացումը պահանջում ե ընկերութեան աշխատանքի ամբողջ գործումը պահանջում ե ընկերութեան աշխատանքի հիմնական սխառմը հիմնովին վերակառուցել: Աշխատանքի ամբողջ և վճռական ողակը դառնում ե մասսաների համար մղած և պայքարը, աշխատավոր գլուղացիութեան և, առաջին հերպայքարը, աշխատավոր գլուղացիութեան և կոլխոզնիկների թին, գլուղատնտեսական բանվորների և կոլխոզնիկների միջից 6—7 միլիոն նոր անդամներ ընկերութեան շարքերը:

Միլիոն նոր անդամներ ընկերութեան շարքերը գրավելու համար մղած պայքարը, Այդ նպատակին հասնելն անկարելի յե առանց մասսայական աշխատանքի կարեւորանկարելի յե առանց ագիտացիան և պրոպագանդան համագույն միջոցները — ագիտացիան և պրոպագանդան համատարապետական կերպով կազմակերպելու: Ահա թե ինչու Ոստավիաքիմի 2-րդ համամիութենական համագումարն աշխատավորների 2-րդ համամիութենական համագումարն աշխատանքի այդ մասին բացառիկ ուշադրութեան ե դարձրել: Դա ինչու և ինչու համագումարի վորոշման համաձայն, «ագիտպրոպագիտանքը պետք ե հիմնական տեղերից մեկը բռնի ընկերութեանը»:

Թյան աշխատանքի ամբողջ սխառնում՝ վերից վար և իբրև բազա ծառայի Ոստավիաքի մի ամբողջ գործնական աշխատանքի ծավալման համար։

Անհրաժեշտ և հատուկ ուշադրություն դարձնել Ոստավիաքի մի սովխոզային ու կոլխոզային խորհուրդներում և բջիջներում ագիտացիայի սեկտորներ կազմակերպելուն ու նրանց աշխատանքին։ Ոստավիաքի մի համագումարը կտրուկ կերպով դեմ է արտահայտվել մյուս սեկտորներում ագիտացիայի և պրոպագանդայի վորևե որգաններ ստեղծելուն։ Դա նշանակում է, վոր ագիտացիայի սեկտորներն այժմ պետք և լուծեն վոչ միայն ընդհանուր խնդիրները, վոր դրված են ամբողջ ընկերության առաջ, այլև մասսայական կամպանիաների գործնական խնդիրները, նրա կազմի մեջ մտնող ամեն մի սեկտորի դժով (որինակ՝ ցանքսային կամպանիաներ, պայքար ֆասսատուների դեմ և այլն)։

Ագիտացիան և պրոպագանդան առաջին պլանում — ըստ էյության սրանից պետք և սկսել ընկերության ամեն մի կազմակերպության աշխատանքի վերակառուցումը։ Մանավանդ այդ անհրաժեշտ և գյուղական կազմակերպությունների մեջ, ուր առանց լայն բացատրական աշխատանքի անհնար և մասսայական կազմակերպություն ստեղծել։ Սովխոզներ և կոլխոզներ բջիջներում ագիտացիայի ու պրոպագանդայի միայն համապատասխան կերպով դնելը կապանակցությունը՝ Ոստավիաքի մի կողմից տարվող բոլոր միջոցառումներին, կամրապնդի ընկերության շարքերը և պայմաններ կստեղծի կազմակերպության անընդհատ աճման համար։

ՇԵՆԱԿԵՏԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գյուղում, մասնավորապես նրա սոցիալիստական սեկտորում Ոստավիաքի մի մասսայական աշխատանքի ծավալումն շատ են խոսում ու դրում։ Բայց դրանով դեռևս ամեցուցադրական բազաներ մասսայական աշխատանքի համար,

այդ մասին յեղած բոլոր խոսակցությունները կմնան միայն բարի ցանկություններ և դրանից վոչ մի գործ չի ստացվի։

Ոստավիաքի մի ագիտամասսայական աշխատանքի և գործնեյություն ուրիշ տեսակների համար լավագույն, լիովին իրենց պրոդարացրած հենման-ցուցադրական կետերն են — Պաշտպանության տները, Խորհրդադույն սովխոզները և կոլխոզները հենց այժմ, անշուշտ, հնարավորություն ունեն կառուցելու կամ սարքավորելու համապատասխան շենքեր այդ նպատակով։ Պետք և հաշվի առնել, վոր գյուղատնտեսական արտադրության պայմաններում բավականին նպատակահարմար և ստեղծել Պաշտպանության տներ այն հաշվով, վոր այնտեղ քիմիային տրվի աչքի ընկնող տեղ։

Ճիշտ և, սովխոզային և կոլխոզային կազմակերպությունները, հավանական և, վոր սկզբում չեն կարողանա սարքավորել հատուկ Պաշտպանության տներ։ Բայց դա վոչ մի չափով չի պակասեցնում մասսայական աշխատանքի հենակետեր կազմակերպելու խնդիրը։ Յեթե չի կարելի միանգամից սեփական շենք ձեռք բերել, պետք և ոգտագործել մյուս կուլտուր-կրթական և արտադրական հիմնարկներն ու ձեռնարկությունները՝ գյուղացու տունը, խրճիթ-ընթերցարանը, դպրոցն, ակումբը, կայարանը, հացահատիկները հանձնելու կետը, նավահանգիստն, ելեվատորը և այլն։ Այդ բոլոր հիմնարկներում կամ գոնե միայն հիմնական կենտրոնական կետերում պետք և կազմակերպել Ոստավիաքի մի որինակելցուցադրական կարիքներն և անկյունակներ։

Սակայն, չի կարելի մոռանալ, վոր այդ բոլոր կարիքներն ու անկյունակները ամենևին ինքնապատակ չեն, այլ միայն միջոց՝ մասսայական, ամենից առաջ, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի համար։ Շատ հաճախ, դժբախտաբար, մինչև իսկ ամենալավ ակումբներում մենք հակառակն ենք տեսնում, յերբ վոչ թե մասսաներն, այլ սարդի վոստայնն ու փոշին են պատում այդ «որինակելի-ցուցադրական» անկյունների քիմիական, ուղղական և գրական սարքավորումները։ Այդպիսի անկյունները ցուցադրական կարող են լինել միայն այն բանի համար, վոր նրանցով անսխալ, կերպով կարելի յե յեղրակացնել թե

կազմակերպութեան մեջ մասնաւորապէս աշխատանքը, միանգամայն բացակայում եւ

Ոստավիաքի մի Պաշտպանութեան տները, կաքինեմները և անկյունները միայն այն ժամանակ են իրենց դերը կատարում, յիշե՛ք նրանց շուրջը լայն ազդեցություն դաստիարակչական աշխատանք եւ տարվում մասնաւորի մեջ: Այն ժամանակ հենց նրանք ազդեցության ու պրոպագանդայի իսկական գործիքներ են հանդիսանում: Դրա մեջ եւ կայանում ամեն մի ազդեցութիւն հիմնական նշանակութիւնը: Առանց դրան նա փաստորեն գոյութիւն չունի:

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Մասնաւորապէս աշխատանքի հաջողութեան գլխավոր պայմանը նրանումն է, վոր այդ աշխատանքը տարվի հենց մասնայի մեջ և վոր թե նրանից դուրս: Այդ մասին վկայում եւ արտադրութեան ցեղերում և հերթափոխութեան ներքին տարվող կուսակցական, պրոֆմիութենական և հենց ոստավիաքի միակն աշխատանքը:

Գյուղի սոցիալիստական սեկտորում անհրաժեշտ է լայն ոգտագործել այդ փորձը: Այստեղ ամենից կարևորն է հարմարեցնել ազդեցության և պրոպագանդան գյուղատնտեսական արտադրութեան և կենցաղի պայմաններին: Այդ պայմանները զանազան ուսումներում, արտադրութեան կազմակերպման զանազան ձևերի ժամանակ (սովխոզ, կոմունա, արտել, անհատական սեկտոր) շատ տարբեր կարող են լինել: Բացի այդ՝ միանգամայն անհրաժեշտ է հաշվի առնել սեզոնականութիւնը, այսինքն աշխատանքների ձմեռային և ամառային հաջորդականութիւնը:

Այս ամենը մի ավելորդ անգամ վկայում է այն մասին, վոր Ոստավիաքի մի բջիջների ազդեցության սեկտորների աշխատանքի սխառմը պետք է լինի բավականաչափ ճկուն և կառուցվի համաձայն սովխոզների բանվորների ու կոլխոզների զանազան խմբերի սպասարկմանը՝ զաշտային աշխատանքների և հանգստի ժամանակ, տանը, խրճիթ-ընթերցարաններում, ակումբներում և այլն:

Իսկ ինչ միջոցներ պիտի ոգտագործվեն՝ գյուղացիական բնակչութեան լայն մասնաւորները ազդեցության ու պրոպագանդայով այդպէս ընդգրկելու համար:

Ռազիոն մասնաւորներին ավելի լայնորեն ընդգրկելու գործիք է: Խորհրդային Միութեան ռադիոֆիկացիայի 5-ամյա պլանով յենթադրվում է շինել 13 միլիոն ռադիո-լսելու կետեր, վորոնցից յերեք քաղաքացի սովետական գյուղում: Այդ նույն պլանով ամեն մի սովխոզ կամ կոլխոզ իր ժողովուրդ կունենա մի կենտրոնական ռադիո-հանգույց, վորի հետ լարերով միացած կլինեն բանվորական հանրակացարանների, կոլխոզների կենտրոնները, զպրոցների խրճիթ-ընթերցարանները, ակումբների և գյուղի այլ կուլտուրական հիմնարկների ռադիո-լսելու կետերը: Բացի այդ՝ ամեն մի ռադիո-հանգույց կունենա միկրոֆոն, այսինքն, նա վոր միայն միջոց կունենա մոտակա և կենտրոնական ռադիո-հաղորդիչ կայանների (շրջանային կամ Մոսկովայի) ծրագիրն ընդունել ու հաղորդել ռադիո-լսողների ընդունելիներին, այլ և տեղական հաղորդումներ անել ռադիոհանգույցից:

